



Ռեկտորի պաշտոնակատար

«Հաստատում եմ»

Գ. Գևորգյան

03 հունիսի 2020 թ.

Կ.Տ.



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ**

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
(Ուսումնական հաստատության անվանումը)

Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(Հաստատության հասցեն)


Երևան 2020

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԵՊՀ կազմակերպական կառուցվածքը	4
ՀԱՎԵԼՎԱԾ 3.1 2019/20 Ուստարում իրականացվող ԵՊՀ կրթական ծրագրերի ցանկն ըստ կրթական մակարդակների	5
ՀԱՎԵԼՎԱԾ 3.2. ԵՊՀ կրթական ծրագրի մասնագրի ձևաթերթ	10
ՀԱՎԵԼՎԱԾ 3.3. Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերը.....	18
ՀԱՎԵԼՎԱԾ 3.3.1. «Հոգեբանություն» բակալավրի կրթական ծրագիր	19
ՀԱՎԵԼՎԱԾ 3.3.2. «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մագիստրոսի կրթական ծրագիր	37
ՀԱՎԵԼՎԱԾ 3.3.3. «Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագիր.....	52
ՀԱՎԵԼՎԱԾ 3.3.4. «Ֆարմացիա» մագիստրոսի կրթական ծրագիր	70
ՀԱՎԵԼՎԱԾ 4.1. 2015 – 2019 թթ. ԵՊՀ ուսանողների թիվն ըստ կրթական ծրագրերի և ուսումնառության ձևերի	84
ՀԱՎԵԼՎԱԾ 4.2. ԵՊՀ օտարերկրյա դիմորդների թիվը և հարաբերությունը ընդունվածների թվին վերջին հինգ տարիների ընթացքում	84
ՀԱՎԵԼՎԱԾ 4.3. 2015-2019 թթ. ուսանողների ներհոսքի վերաբերյալ ցուցանիշները.....	85
ՀԱՎԵԼՎԱԾ 4.4. 2014-2019 թթ. ուսանողների արտահոսքի վերաբերյալ ցուցանիշները.....	86
ՀԱՎԵԼՎԱԾ 4.5. 2014 -2019 թթ. ուսանողների հեռացումների (ազատումների) և վերականգնումների վերաբերյալ ցուցանիշները.....	86
ՀԱՎԵԼՎԱԾ 4.6. 2015 -2019 թթ. շրջանավարտների զբաղվածության մակարդակը	87
ՀԱՎԵԼՎԱԾ 5.1. ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կրթական կառուցամասի կառուցվածքը (2016-2019 թթ.).....	88
ՀԱՎԵԼՎԱԾ 5.2. ԵՊՀ դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի նորացված կրթական կառուցամասի կառուցվածքը (2019-2021 թթ.)	88
ՀԱՎԵԼՎԱԾ 6.1. ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ	90
ՀԱՎԵԼՎԱԾ 7.1. ԵՊՀ մասնաշենքերը և դրանցում տեղակայված ստորաբաժանումները. 133	
ՀԱՎԵԼՎԱԾ 7. 2. Բյուջեի բաշխումը` ըստ ռազմավարական ուղղությունների.....	134
ՀԱՎԵԼՎԱԾ 7.3. ԵՊՀ ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման արդյունքների համեմատական վերլուծությունը.....	136
ՀԱՎԵԼՎԱԾ 9.1. Օտար լեզուների տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար	143

ՀԱՎԵԼՎԱԾ 9.2. Օտար լեզուների տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար	143
ՀԱՎԵԼՎԱԾ 9.3. Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվը՝ ըստ տարիների	143
ՀԱՎԵԼՎԱԾ 9.4. Օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում/ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների թիվը ըստ երկրների	144
ՀԱՎԵԼՎԱԾ 10.1. ԵՊՀ որակի ներքին ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքը.....	146
ՀԱՎԵԼՎԱԾ 10. 2. ԵՊՀ ֆակուլտետների և կրթական կենտրոնների զարգացման ռազմավարական ծրագրերը և դրանց իրականացման ժամանակացույց-պլանները	147

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



2019/20 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԵՂՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿՆ ԸՍՏ
ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

hh	Կրթական ծրագիր	Կրթական մակարդակ	Ուսուցման ձև	
			61	21
	Ընդհանուրը՝	62	61	21
1	Մաթեմատիկա	Բակալավր	Առկա	-
2	Ակտուար. և ֆին. մաթ.	Բակալավր	Առկա	-
3	Մեխանիկա	Բակալավր	Առկա	-
4	Կիրառ. վիճ. և տվյալ. գիտ.	Բակալավր	Առկա	-
5	Ինֆորմ. և կիրառ. մաթեմ.	Բակալավր	Առկա	Հեռակա
6	Տեղեկ. անվտանգույթ.	Բակալավր	Առկա	-
7	Ֆիզիկա	Բակալավր	Առկա	-
8	Միջ. ռեակտոր. ֆիզիկա	Բակալավր	Առկա	-
9	Ռազմաֆիզիկա	Բակալավր	Առկա	-
10	Կ/Հ ֆիզիկա և միկրոէլ.	Բակալավր	Առկա	-
11	Հ/Հ և ազդանշան. մշակում	Բակալավր	Առկա	-
12	Քիմիա	Բակալավր	Առկա	-
13	Կիրառական քիմիա	Բակալավր	Առկա	-
14	Սննդի անվտանգություն	Բակալավր	Առկա	-
15	Ֆարմացիա	Բակալավր	Առկա	-
16	Դեղագործական քիմիա	Բակալավր	-	Հեռակա
17	Կենսաբանություն	Բակալավր	Առկա	Հեռակա
18	Կենսաֆիզ. և կենսաինֆորմ.	Բակալավր	Առկա	-
19	Կենսաքիմիա	Բակալավր	Առկա	-
20	Աշխարհագրություն	Բակալավր	Առկա	Հեռակա
21	Երկրաբանություն	Բակալավր	Առկա	Հեռակա
22	Սերվիս	Բակալավր	Առկա	Հեռակա
23	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Բակալավր	Առկա	Հեռակա
24	Պատմություն	Բակալավր	Առկա	Հեռակա
25	Արվեստաբանություն	Բակալավր	Առկա	-
26	Մշակութաբանություն	Բակալավր	Առկա	-
27	Կովկասագիտություն	Բակալավր	Առկա	-
28	Հնագիտ. և ազգագրություն	Բակալավր	Առկա	-
29	Փիլիսոփայություն	Բակալավր	Առկա	-
30	Հոգեբանություն	Բակալավր	Առկա	Հեռակա
31	Սոցիոլոգիա	Բակալավր	Առկա	-
32	Սոց. աշխատանք	Բակալավր	Առկա	Հեռակա
33	Միջազգ. հարաբ.	Բակալավր	Առկա	Հեռակա
34	Քաղաքագիտություն	Բակալավր	Առկա	-
35	Հանրային կառավարում	Բակալավր	Առկա	Հեռակա
36	Հայոց լեզու և գրակ.	Բակալավր	Առկա	Հեռակա
37	Սոց. մանկավարժություն	Բակալավր	Առկա	-
38	Լրագրություն	Բակալավր	Առկա	Հեռակա
39	Ռուսաց լեզու և գրակ.	Բակալավր	Առկա	Հեռակա

40	ՄՀ՝ ռուսաց լեզու	Բակալավր	Առկա	-
41	Միջմշակ. հաղ. և թարգմ. ռուս.	Բակալավր	Առկա	-
42	Անգլերեն լեզու և գրակ.	Բակալավր	Առկա	Հեռակա
43	Ֆրանսերեն լեզու և գրակ.	Բակալավր	Առկա	-
44	Գերմաներեն լեզու և գրակ.	Բակալավր	Առկա	-
45	Իսպաներեն լեզու և գրակ.	Բակալավր	Առկա	-
46	Իտալերեն լեզու և գրակ.	Բակալավր	Առկա	-
47	Անգլ. լ., ֆրանս. լ. և հաղ.	Բակալավր	Առկա	-
48	Անգլ. լ., գերմ. լ. և հաղ.	Բակալավր	Առկա	-
49	Անգլ. լ., իսպ. լ. և հաղ.	Բակալավր	Առկա	-
50	Անգլ. լ., իտալ. լ. և հաղ.	Բակալավր	Առկա	-
51	Թ. գործ՝ անգլ. և հայ. լ.	Բակալավր	Առկա	-
52	ՄՀ՝ անգլերեն լեզու	Բակալավր	Առկա	-
53	Արաբագիտություն	Բակալավր	Առկա	-
54	Իրանագիտություն	Բակալավր	Առկա	-
55	Թյուրքագիտություն	Բակալավր	Առկա	-
56	Իրավագիտություն	Բակալավր	Առկա	Հեռակա
57	Տնտեսագիտություն	Բակալավր	Առկա	Հեռակա
58	Կառավարում	Բակալավր	Առկա	Հեռակա
59	Ֆինանսներ	Բակալավր	Առկա	Հեռակա
60	Աստվածաբանություն	Բակալավր	Առկա	Հեռակա
61	Կրոնագիտություն	Բակալավր	Առկա	-
62	Եկեղեցաբանություն	Բակալավր	Առկա	-

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

հհ	Կրթական ծրագիր	Կրթական մակարդակ	Ուսուցման ձև	
	Ընդհանուրը՝	120	116	21
1.	Դիֆերենցիալ հավասարումներ	Մագիստրոս	Առկա	-
2.	Հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն	Մագիստրոս	Առկա	-
3.	Ֆունկցիաների տեսություն	Մագիստրոս	Առկա	-
4.	Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	Մագիստրոս	Առկա	-
5.	Հանրահաշիվ և երկրաչափություն	Մագիստրոս	Առկա	-
6.	Մեխանիկա և կիրառական մաթեմատիկա	Մագիստրոս	Առկա	-
7.	Ռիսկերի կառավարում	Մագիստրոս	Առկա	-
8.	Ֆինանսական մաթեմատիկա	Մագիստրոս	Առկա	-
9.	Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա	Մագիստրոս	Առկա	-
10.	Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում	Մագիստրոս	Առկա	-
11.	Հաշվողական մեթոդների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում	Մագիստրոս	Առկա	-
12.	Տեսական ֆիզիկա	Մագիստրոս	Առկա	-
13.	Պինդ մարմնի ֆիզիկա	Մագիստրոս	Առկա	-
14.	Պինդմարմնային նանոֆիզիկա և նանոնյութեր	Մագիստրոս	Առկա	-
15.	Մակրոմոլեկուլների ֆիզիկա	Մագիստրոս	Առկա	-
16.	Միջուկային ռեակտորների ֆիզիկա	Մագիստրոս	Առկա	-
17.	Աստղաֆիզիկա	Մագիստրոս	Առկա	-

18.	Օպտիկա	Մագիստրոս	Առկա	-
19.	Ռադիոֆիզիկա	Մագիստրոս	Առկա	-
20.	Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա	Մագիստրոս	Առկա	-
21.	Գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում	Մագիստրոս	Առկա	-
22.	Հեռահաղորդակցություն	Մագիստրոս	Առկա	-
23.	Քիմիա	Մագիստրոս	Առկա	-
24.	Ֆիզիկական քիմիա	Մագիստրոս	Առկա	-
25.	Սննդի անվտանգություն	Մագիստրոս	Առկա	-
26.	Ֆարմացիա	Մագիստրոս	Առկա	-
27.	Ընդհանուր և մոլեկուլային զենետիկա	Մագիստրոս	Առկա	-
28.	Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա	Մագիստրոս	Առկա	-
29.	Էկոլոգիա և կենսաառեսուրսների կառավարում	Մագիստրոս	Առկա	-
30.	Բժշկական անկաբանություն և կիրառական բուսաբանություն	Մագիստրոս	Առկա	-
31.	Կիրառական մանրէաբանություն	Մագիստրոս	Առկա	-
32.	Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա	Մագիստրոս	Առկա	-
33.	Կենսաֆիզիկա	Մագիստրոս	Առկա	-
34.	Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա	Մագիստրոս	Առկա	-
35.	Կենսաինֆորմատիկա	Մագիստրոս	Առկա	-
36.	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Մագիստրոս	Առկա	-
37.	Երկրաֆիզիկա, ջրաերկրաբանություն, ճարտարագիտական երկրաբանություն	Մագիստրոս	Առկա	-
38.	Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն և հետախուզում	Մագիստրոս	Առկա	-
39.	Զրաօդերևութաբանություն	Մագիստրոս	Առկա	-
40.	Ֆիզիկական աշխարհագրություն	Մագիստրոս	Առկա	-
41.	Հասարակական աշխարհագրություն	Մագիստրոս	Առկա	-
42.	Աշխարհագրություն	Մագիստրոս	Առկա	-
43.	Կայուն զբոսաշրջություն	Մագիստրոս	Առկա	-
44.	Սերվիս	Մագիստրոս	Առկա	Հեռակա
45.	Արվեստաբանություն	Մագիստրոս	Առկա	-
46.	Հայոց պատմություն	Մագիստրոս	Առկա	Հեռակա
47.	Համաշխարհային պատմություն	Մագիստրոս	Առկա	-
48.	Հայաստանի հարակից երկրների պատմություն	Մագիստրոս	Առկա	-
49.	Հնագիտություն և ազգաբանություն	Մագիստրոս	Առկա	-
50.	Կովկասագիտություն	Մագիստրոս	Առկա	-
51.	Հայագիտություն	Մագիստրոս	Առկա	-
52.	Միջուկագիտություն	Մագիստրոս	Առկա	-
53.	Մշակութաբանություն	Մագիստրոս	Առկա	-
54.	Քաղաքական տեխնոլոգիաներ և մարքեթինգ (<i>տվյալ ծրագիրը այս տարի չի գործում</i>)	Մագիստրոս	Առկա	-
55.	Ազգային անվտանգություն	Մագիստրոս	Առկա	Հեռակա
56.	Տարածաշրջանային քաղաքականություն	Մագիստրոս	Առկա	-
57.	Միջազգային հարաբերություններ	Մագիստրոս	Առկա	Հեռակա
58.	Համաշխարհային քաղաքականություն	Մագիստրոս	Առկա	-
59.	Հանրային կառավարում	Մագիստրոս	Առկա	-
60.	Հանրային քաղաքականություն	Մագիստրոս	Առկա	-
61.	Միջազգային տնտեսական հարաբերություններ	Մագիստրոս	Առկա	Հեռակա
62.	Մոդելավորումը ֆինանսատնտեսական	Մագիստրոս	Առկա	-

	համակարգում			
63.	Տվյալների գիտությունը բիզնեսում	Մագիստրոս	Առկա	-
64.	Տնտեսական քաղաքականություն և իրավունք	Մագիստրոս	Առկա	Հեռակա
65.	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	Մագիստրոս	Առկա	Հեռակա
66.	Հաշվապահական հաշվառում և աուդիտ	Մագիստրոս	Առկա	Հեռակա
67.	Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում	Մագիստրոս	Առկա	Հեռակա
68.	Գործարար վարչարարություն /կառավարում/	Մագիստրոս	Առկա	Հեռակա
69.	Ինովացիոն կառավարում	Մագիստրոս	Առկա	Հեռակա
70.	Փիլիսոփայություն	Մագիստրոս	Առկա	-
71.	Կառավարման հոգեբանություն	Մագիստրոս	Առկա	-
72.	Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա	Մագիստրոս	Առկա	-
73.	Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն	Մագիստրոս	Առկա	-
74.	Կիրառական հոգեբանություն	Մագիստրոս	Առկա	-
75.	Մոցիալական անվտանգություն և միգրացիոն քաղաքականություն	Մագիստրոս	Առկա	-
76.	Մոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն	Մագիստրոս	Առկա	-
77.	Հասարակայնության հետ կապեր	Մագիստրոս	Առկա	-
78.	Մարդկային ռեսուրսների կառավարում	Մագիստրոս	Առկա	Հեռակա
79.	Մոցիալական քաղաքականություն և վարչարարություն	Մագիստրոս	Առկա	-
80.	Լրագրություն	Մագիստրոս	Առկա	-
81.	Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ	Մագիստրոս	Առկա	Հեռակա
82.	Հաղորդակցություն, մեդիա և հասարակություն	Մագիստրոս	Առկա	-
83.	Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ	Մագիստրոս	Առկա	-
84.	Հայոց լեզու և գրականություն	Մագիստրոս	-	Հեռակա
85.	Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն	Մագիստրոս	Առկա	-
86.	Համաշխարհային գրականություն և գրականության տեսություն	Մագիստրոս	Առկա	-
87.	Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն	Մագիստրոս	Առկա	-
88.	Հայ գրականության պատմություն	Մագիստրոս	Առկա	-
89.	Հայոց լեզու	Մագիստրոս	Առկա	-
90.	Հայ գրականություն	Մագիստրոս	Առկա	-
91.	Ռուսաց լեզու և գրականություն	Մագիստրոս	Առկա	-
92.	Անգլերեն լեզու և գրականություն	Մագիստրոս	Առկա	Հեռակա
93.	Արտասահմանյան գրականություն	Մագիստրոս	Առկա	-
94.	Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն	Մագիստրոս	Առկա	-
95.	Միջմշակութային հաղորդակցություն՝ անգլերեն	Մագիստրոս	Առկա	-
96.	Միջմշակութային հաղորդակցություն՝ գերմաներեն	Մագիստրոս	Առկա	-
97.	Միջմշակութային հաղորդակցություն՝ ֆրանսերեն	Մագիստրոս	Առկա	-
98.	Միջմշակութային հաղորդակցություն՝ իսպաներեն	Մագիստրոս	Առկա	-
99.	Միջմշակութային հաղորդակցություն՝ իտալերեն	Մագիստրոս	Առկա	-
100.	Կիրառական լեզվաբանություն	Մագիստրոս	Առկա	-
101.	Միջազգային գործարար հաղորդակցման լեզվամշակույթ	Մագիստրոս	Առկա	-

102.	Վարչագործարարական թարգմանություն	Մագիստրոս	Առկա	-
103.	Կիրառական արաբագիտություն	Մագիստրոս	Առկա	-
104.	Թյուրքական պատմաբանասիրություն	Մագիստրոս	Առկա	-
105.	Իրանական պատմաբանասիրություն	Մագիստրոս	Առկա	-
106.	Իրավունքի տեսություն և սահմանադրական իրավունք	Մագիստրոս	Առկա	-
107.	Քաղաքացիական իրավունք և դատավարություն	Մագիստրոս	Առկա	Հեռակա
108.	Քրեական իրավունք և դատավարություն	Մագիստրոս	Առկա	Հեռակա
109.	Գործարարական իրավունք	Մագիստրոս	Առկա	-
110.	Կրիմինալոգիա	Մագիստրոս	Առկա	-
111.	Միջազգային և Եվրոպական իրավունք	Մագիստրոս	Առկա	-
112.	Վարդապետական աստվածաբանություն	Մագիստրոս	Առկա	-
113.	Եվրոպագիտություն	Մագիստրոս	Առկա	-
114.	Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում	Մագիստրոս	Առկա	-
115.	Տեղեկատվական համակարգերի մշակում	Մագիստրոս	Առկա	-
116.	Տեղեկատվական համակարգերի կառավարում	Մագիստրոս	Առկա	-
117.	Կրթության կազմակերպում	Մագիստրոս	Առկա	Հեռակա
118.	Ցեղասպանագիտություն	Մագիստրոս	Առկա	-
119.	Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	Մագիստրոս	-	Հեռակա
120.	Բանկային գործունեության կազմակերպում	Մագիստրոս	-	Հեռակա

ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐԻ ՁԵՎԱԹԵՐԹ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆակուլտետ

նշել ֆակուլտետը

նշել ծրագրի անվանումը

ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	
2. Բուհը	Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

9. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

-
-
-

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

- 1.
- 2.
- 3.
- 4.
- 5.
- 6.
- 7.

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

- 1.
- 2.
- 3.
- 4.
- 5.
- 6.
- 7.
- 8.

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

- 1.
- 2.
- 3.
- 4.
- 5.

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

18. Կրթական ծրագիրը սպասարկող դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ

ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ

նշել ծրագրի անվանումը

(Լրացվում է առանձին տրամադրված Excel ֆայլում և այստեղ կցվում ծրագրի մասնագրին)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆակուլտետ

նշել ֆակուլտետը

նշել ծրագրի անվանումը

ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

1. [թվանիշ] ¹	2. [դասընթաց]	3. [կրեդիտ] ECTS կրեդիտ
4. [շաբաթական ժամերի քանակ] ժամ/շաբ.	5. [ժամաքանակի բաշխումը՝ ըստ պարապմունքի ձևերի]	
6. [կիսամյակ]	7. [գնահատման ձևը]	
8. [դասընթացի նպատակ(ներ)ը] Դասընթացի նպատակն է՝ <ul style="list-style-type: none"> • • • 		
9. [դասընթացի կրթական վերջնարդյունքները] Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝ <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. 2. 3. <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 4. 5. 6. <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)</i></p> <ol style="list-style-type: none"> 7. 		

¹ Լրացնելուց հետո ջնջել ուղղանկյուն փակագծերը և նրանցում գրված ուղղորդող տեքստը:

8.

10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.

1.

2.

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1.

2.

3.

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1. 1-ին ընթացիկ քննություն [ներկայացնել գնահատման մեթոդները և չափանիշները].

2. 2-րդ ընթացիկ քննություն. [ներկայացնել գնահատման մեթոդները և չափանիշները].

3. Եզրափակիչ քննություն. [ներկայացնել գնահատման մեթոդները և չափանիշները].

4. Ստուգաթք. [ներկայացնել գնահատման մեթոդները և չափանիշները].

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

14. Հիմնական գրականության ցանկ.

1.

2.

3.

4.

5.

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ
ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԳՐԵՐԸ

«031301.01.6 - Հոգեբանություն» բակալավրի կրթական ծրագիր

«031301.07.7 - Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» մագիստրոսի կրթական ծրագիր

«091601.01.6 - Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագիր

«091601.01.7 - Ֆարմացիա» մագիստրոսի կրթական ծրագիր

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ

«Հոգեբանություն»

ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	«Հոգեբանություն», 031301.01.6
2. Բուհը	Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Հոգեբանության բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	1992թ., (բակալավրի որակավորմամբ 1995թ-ից)
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները: Բակալավրի առկա ուսուցման ծրագրի ընդունելությունը կատարվում է ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված համապատասխան կարգի¹:

Ընդունելության քննությունները՝ Հլգ(գ), Օտլ(գ), Կ (գ)²:

9. Ծրագրի նպատակները

Ծրագիրը նպատակ ունի.

¹ «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ», ՀՀ կառավարության որոշում (26 ապրիլի 2012 թվականի N 597 –Ն):

² «Կենսաբանություն» առարկայից ընդունելության քննությունը պարտադիր է անվճար տեղերի դիմորդների համար, իսկ վճարովի տեղերի դիմորդների համար փոխանցվում է դպրոցի «Կենսաբանություն» առարկայի ամփոփիչ գնահատականը:

- Տրամադրելու բազմակողմանի գիտելիքներ հոգեբանության հիմնարար և կիրառական ոլորտների վերաբերյալ, տալու խոր տեսական հենք՝ հոգեկանի կառուցվածքը, զարգացումը, ախտաբանական դրսևորումները հասկանալու, մեկնաբանելու և վերլուծելու համար:
- Ձևավորելու մասնագիտական կարողություններ՝ ուսուցանելով հոգեճանաչման, հոգեբանական հետազոտության իրականացման, հոգեբանական խորհրդատվության սկզբունքներն ու մեթոդները:
- Կատարելագործելու ուսանողների ընդհանրական մտավոր կարողությունները՝ վերլուծություն, համեմատություն և համադրում, քննադատական մտածողությունը, տարբեր աղբյուրներից տեղեկատվություն հայթայթելու, մեկնաբանելու և ներկայացնելու կարողությունը:
- Ջարգացնելու ուսանողների աշխատանքային գործունակությունը՝ իրենց ուսումնառության ոլորտին և մակարդակին համապատասխան, օգնելու նրանց՝ կիրառելու մասնագիտական կարողությունները արդի հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1 . Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, սահմանելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:

Ա2 . Գիտակցելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:

Ա3 . Սահմանելու հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հիմնական մեթոդները, տարբերակելու դրանց կիրառման ուղիները, հնարավորությունները և սահմանափակումները:

Ա4 . Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առնչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, հասկանալու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում:

Ա5 . Թվարկելու հոգեբանի մասնագիտական գործունեության հիմնական էթիկական սկզբունքները, մատնանշելու դրանց նշանակությունը և պահպանման անհրաժեշտությունը:

Ա6 . Ճանաչելու հոգեկան խանգարումների ախտանիշները և դասակարգման համակարգերը:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:

Բ2. Գործնականում կիրառելու հոգեճանաչման մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:

Բ3 . Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ:

Բ4 . Համադրելու հոգեբանական աշխատանքի տարբեր մոտեցումներ՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում, գտնելու մասնագիտական լուծումներ՝ ծավալելով հանրօգուտ գործունեություն:

Բ5 . Կազմակերպելու իր աշխատանքային և/կամ ուսումնական գործունեությունը ստացած տեսագործնական գիտելիքներին համապատասխան:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Գ1 . Համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ2 . Կիրառելու ժամանակակից ՏՀՏ-ները գիտելիքի փոխանցման գործընթացը և մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու և դյուրացնելու համար:

Գ3 . Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գ4 . Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր:

Գ5 . ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

Մինչև 60 լսարանային ժամ ներառող դասընթացները գնահատվում են առանց եզրափակիչ գնահատման (միայն ընթացիկ գնահատումներով), կամ առանց ընթացիկ գնահատման (միայն եզրափակիչ գնահատմամբ):

60 և ավելի լսարանային ժամ ներառող առարկաները գնահատվում են եզրափակիչ գնահատմամբ՝ 2 ընթացիկ (գրավոր և/կամ բանավոր) և 1 եզրափակիչ (բանավոր) քննությունների միջոցով:

Ընթացիկ գրավոր քննությունները ենթադրում են ամփոփ վերլուծական պատասխաններ՝ ըստ հարցատոմսի, կամ առաջադրանքների գրավոր կատարում (հետազոտական աշխատանք, հոգեախտորոշիչ մեթոդիկայի կիրառում և այլն), իսկ ընթացիկ բանավոր քննությունները ենթադրում են ծավալուն վերլուծական պատասխաններ ըստ հարցատոմսի, կամ էսսեների պատրաստում, ինքնուրույն և խմբային աշխատանքների կատարում և բանավոր ներկայացում:

Եզրափակիչ բանավոր քննությունները անցկացվելու են ըստ հարցատոմսերի:

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

«Հոգեբանություն» ծրագրի շրջանավարտները ինքնուրույն մասնագիտական գործունեության հնարավորություն կունենան հոգեախտորոշման, հոգեբանական աջակցության, առողջապահական, մասնագիտական գործունեության, սոցիալական խնամքի և կրթական ոլորտներում:

Շրջանավարտները կարող են աշխատել հիմնական և ավագ դպրոցներում որպես հոգեճանաչողական, զարգացնող, հոգեշտկող և աջակցող հոգեբան-մասնագետներ, կազմակերպություններում որպես անձնակազմի հետ աշխատող հոգեբաններ, փորձառու հոգեբանի ղեկավարությամբ (սուպերվիզիայի ներքո) հոգեբանական ծառայության կենտրոններում որպես հոգեբանական ախտորոշում և աջակցություն իրականացնող մասնագետներ, խնամքի և պաշտպանության, ցերեկային կենտրոններում որպես սոցիալական խնամք և հոգեբանական աջակցություն

իրականացնող մասնագետներ: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրատուրայում, հետագայում՝ ասպիրանտուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Սույն ծրագրով ուսումնառության օժանդակության համար առկա են բազմազան ռեսուրսներ՝ դասախոսների անձնական միջոցներով և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ձեռքբերված ժամանակակից մասնագիտական գրականություն (հայերեն, ռուսերեն և անգլերեն), էլեկտրոնային գրադարան, քանակական հետազոտությունների համար նախատեսված համակարգչային ծրագրեր, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասախոսություններ իրականացնելուն հարմարեցված լսարաններ, հոգեբանական գործնական աշխատանքների համար նախատեսված և կահավորված թրենինգների սենյակ:

Ծրագրի իրականացման համար գիտահետազոտական և ուսումնական բազա են հանդիսանում ֆակուլտետում գործող 3 հետազոտական լաբորատորիաները և Կիրառական հոգեբանության կենտրոնը: Ուսանողները մասնակցում են լաբորատորիաների աշխատանքներին, ինչպես նաև միջազգային համագործակցության շրջանակներում լաբորատորիաների կողմից իրականացվող միջմշակութային ուսումնասիրություններին:

Ֆակուլտետի դասախոսական կազմը կիրառում է դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդներ և միջոցներ՝ բանավեճեր, փոքր խմբերով աշխատանքներ, հետազոտական առաջադրանքներ, որոնք նպաստում են ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

Տվյալ կրթական ծրագրի մշակման հիմքում ընկած են բարձրագույն կրթության որակավորումների եվրոպական շրջանակը («Դուբլինյան նկարագրիչները»), ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 22.12.2016թ.-ի թիվ 1326-Ա հրամանով հաստատված «Հոգեբանություն մասնագիտության» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերը: Ուսումնասիրվել են առաջատար բուհերի համանման հավատարմագրված կրթական ծրագրերը: Մասնավորապես, ուսումնասիրվել է Высшая школа экономики և Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի «Հոգեբանություն» բակալավրի կրթական ծրագրերը:

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

չկան

18. Կրթական ծրագիրը սպասարկող դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ

• Ընդհանրական կարողություններ

Դասավանդման և հոգեբանամանկավարժական

- Ուսանողակենտրոն մեթոդաբանության իմացություն և կիրառման կարողություն դասընթացի մշակման և իրականացման գործում:
- Դասավանդման և ուսուցանման ինտերակտիվ և նորարարական մեթոդների կիրառման, չափանիշահեն գնահատման կարողություն:
- Ուսանողին աջակցելու, մոտիվացնելու և անձնային ուժեղ կողմերի զարգացմանը աջակցելու կարողություն:

Հետազոտական

- հետազոտության մեթոդաբանական սկզբունքների, քանակական և որակական մեթոդների իմացություն,
- տարաբնույթ գիտական աղբյուրների հետ աշխատելու, այդ թվում համացանցային տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու հմտություն,

Հաղորդակցման

- լսարանի հետ բանավոր հաղորդակցվելու և կառավարելու հմտություն,
- հրետորիկայի տարրական հմտություններ,
- միջանձնային հաղորդակցման հմտություններ,
- օտար լեզվի իմացություն,

S2S կիրառություն

- բազային համակարգչային (MS Office փաթեթի ազատ տիրապետում՝ Word, Excel, Power-Point) հմտություններ,
- ժամանակակից սոցիալական հարթակներից օգտվելու հմտություն,
- լուսացուցադրություններ պատրաստելու և ներկայացնելու հմտություններ (pptx, prezi, canva և այլն):

Այլ կարողություններ

- ժամանակի կառավարման կարողություն,
- կոնֆլիկտների հաղթահարման և համագործակցելու կարողություններ

- **Մասնագիտական գիտելիքներ և կարողություններ**

- Հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքների, հիմնարար և արդի տեսությունների, հայեցակարգերի և ժամանակակից միտումների մասին գիտելիքներ,
- Հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առնչվող հիմնախնդիրները հասկանալու, վերլուծելու և մեկնաբանելու կարողություն,
- Հոգեբանության տարբեր բնագավառներին առնչվող մեթոդական և կիրառական բնույթի խնդիրների ուսումնասիրման կարողություն քանակական և/կամ որակական մեթոդաբանությամբ,
- Հոգեբանական աջակցության տարբեր ձևերի՝ հոգեախտորոշիչ/հոգեճանաչողական, խորհրդատվական, լուսավորչական աշխատանքներ (անհատական և/կամ խմբային) իրականացնելու սկզբունքների իմացություն և կարողություն,
- Մասնագիտական գործունեության էթիկական սկզբունքների (հետազոտական և գործնական) իմացություն և պարտադիր պահպանում:

- **Ընդհանուր պահանջներ**

- **Մասնագիտական պահանջներ**

- գիտական աստիճան և/կամ մագիստրոսի կոչում հոգեբանության կամ հարակից ոլորտում կամ առնվազն 5 տարվա մասնագիտական՝ հետազոտական կամ պրակտիկ փորձի առկայություն համապատասխան ոլորտում,
- վերջին 5 տարում առնվազն 1 գիտական և/կամ մեթոդական հրատարակություն առկայություն,
- վերջին 5 տարվա ընթացքում մասնակցություն տեղական կամ միջազգային վերապատրաստումների և/կամ մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացների:

- **Մանկավարժական փորձ**

- մասնագիտական դասընթացների դասավանդման և/կամ վերապատրաստումներ (թրեյնինգներ) իրականացնելու առնվազն 3 տարվա փորձ:

- **Այլ պահանջներ**

- ուսանողական հարցման արդյունքներով ստացված գնահատականների միջինը՝ առնվազն 4,0 (գործող դասախոսների համար):

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություններ	
Ա1	Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, սահմանելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում	Բ1	Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար
Ա2	Գիտակցելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները	Բ2	Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ
Ա3	Մահմանելու հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հիմնական մեթոդները, մատնանշելու դրանց կիրառման ուղիները, հնարավորությունները և սահմանափակումները	Բ3	Տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ
Ա4	Ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առնչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, հասկանալու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում	Բ4	Համադրելու հոգեբանական աշխատանքի տարբեր մոտեցումներ՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում, գտնելու մասնագիտական լուծումներ՝ ծավալելով հանրօգուտ գործունեություն
Ա5	Թվարկելու հոգեբանի մասնագիտական գործունեության հիմնական էթիկական սկզբունքները, մատնանշելու դրանց նշանակությունը և պահպանման անհրաժեշտությունը	Բ5	Կազմակերպելու իր աշխատանքային և/կամ ուսումնական գործունեությունը ստացած տեսագործնական գիտելիքներին համապատասխան
Ա6	Ճանաչելու հոգեկան խանգարումների ախտանիշները և դասակարգման համակարգերը	Բ6	
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1	Համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը	Գ4	Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր
Գ2	Կիրառելու ժամանակակից S2S -ները գիտելիքի փոխանցման գործընթացը և մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու և դյուրացնելու համար	Գ5	Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը
Գ3	Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ		

Այցելուականտրոն թերապիա	1309/Բ15				+	+				+									
Առողջության հոգեբանություն	1306/Բ15	+	+							+	+					+			
Մեռային վարքի հոգեբանություն	1308/Բ09		+		+					+									+
Գովազդի հոգեբանություն	1306/Բ16				+			+					+						+
Հոգեբանական ծառայությունը դպրոցում	1308/Բ10				+	+				+	+	+	+						
Իշխանության հոգեբանություն և հոգեվերլուծություն	1309Բ/16				+					+	+								+
Ծնող-երեխա փոխհարաբերությունների հոգեբանություն	1309Բ/17		+							+	+		+						+
Մասնագիտական պրակտիկա	1306/Բ17 1308/Բ11 1309/Բ18					+			+	+	+		+						

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ

«Հոգեբանություն»

ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

1. 1306/F05	2. Կոգնիտիվ գործընթացների հոգեբանություն և պրակտիկում	3. 7 ECTS կրեդիտ
4. 7 ժամ/շաբ.		5. դաս. – 4, գործ. - 1, լաբ.-2
6. 2 –րդ՝ աշնանային կիսամյակ		7. եզրափակիչ գնահատումով
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողներին ծանոթացնել կոգնիտիվ գործընթացների հոգեբանական ուսումնասիրություններին, ցույց տալ հոգեկան արտացոլման բարձրագույն ձևերի յուրակերպությունը, • ներկայացնել դասական և ժամանակակից տեսությունները, տալ հիմնական հարցադրումների և խնդիրների գիտական բացատրությունները, • ծանոթացնել դրանց փորձարարական ուսումնասիրման եղանակներին և հիմնական արդյունքներին: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ul style="list-style-type: none"> • հասկանալ կոգնիտիվ գործընթացների աշխատանքի առանձնահատկությունները, • վերլուծել կոգնիտիվ ոլորտի զարգացման օրինաչափությունները, • գտնել և ուսումնասիրել կոգնիտիվ ոլորտի նորագույն հոգեբանական տեսություններ և ուսումնասիրություններ: <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ul style="list-style-type: none"> • ուսումնասիրել և վերլուծել կոնկրետ անհատի կոգնիտիվ ոլորտի անհատական առանձնահատկությունները, • կազմել և իրականացնել կոգնիտիվ գործընթացների ուսումնասիրման հոգեբանական հետազոտական ծրագրեր, <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ul style="list-style-type: none"> • քննադատորեն վերլուծել և եզրահանգումներ կատարել կոգնիտիվ տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ, • ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքը, ընկալել և տարածել նոր տեղեկատվությունը: 		
10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.		

1. Ա1 Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, սահմանելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:
2. Ա2 Գիտակցելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները:
3. Ա3 Սահմանելու հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հիմնական մեթոդները, մատնանշելու դրանց կիրառման ուղիները, հնարավորությունները և սահմանափակումները
4. Բ1 Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:
5. Բ2 Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:
6. Գ3 Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների,
7. ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ
8. Գ4 Պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր
9. Գ5 Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.

1. Դասընթացի յուրացումը իրականանում է միմյանց միջև փոխադարձ պարապմունքների և կրթության ձևերի միջոցով, որոնց թվին են պատկանում դասախոսությունները, պրակտիկ պարապմունքները, ուսանողների ինքնուրույն աշխատանքը, յուրացման այլ ակտիվ մեթոդներ, պրակտիկ առաջադրանքների իրականացում, գործնական խաղեր, խմբային քննարկումներ:
2. Կարևոր տեղ է հատկացվում ուսանողների ինքնուրույն աշխատանքին, որը ներառում է անցած նյութի կրկնություն՝ կոնսպեկտներով, յուրաքանչյուր թեմայի գրականության հետ ծանոթացում, այդ թվում նաև համացանցի օգնությամբ խմբային քննարկումներին նախապարտրաստում:
3. Առարկայի դասավանդումը ենթադրում է նաև ժամանակակից բազմաթիվ գործնական հնարների և մեթոդների մատուցում:

12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.

1. 1-ին ընթացիկ քննություն (առավելագույնը՝ 5 միավոր, 25 %):

Գնահատման մեթոդ. Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով:

Գնահատման չափանիշներ.

2. 2-րդ ընթացիկ քննություն (առավելագույնը՝ 5 միավոր, 20 %):

Գնահատման մեթոդ. Իրականացվում է գրավոր՝ թեստային հարցերին բաց և փակ պատասխանների ձևով:

Գնահատման չափանիշներ.

3. Եզրափակիչ քննություն (առավելագույնը՝ 10 միավոր, 50%):

Գնահատման մեթոդ. Իրականացվում է բանավոր՝ համաձայն անցած թեմաների կազմված հարցաշարի հարցերին ուսանողների բանավոր պատասխանների միջոցով:

Գնահատման չափանիշներ.

13. Դասընթացը և սեմինարները բաղկացած են հետևյալ հիմնական բաժիններից.

1. Ընդհանուր հասկացություն հիշողության մասին: Հիշողության ֆենոմենոլոգիան:

2. Հիշողության կազմակերպումը. հիմնական մոտեցումներն ու տեսությունները:

3. Հիշողության դասակարգումը, տեսակները, ձևերը:

4. Հիշողության եռաբաղադրիչ մոդելը կառուցվածքը և գործընթացները:

5. Հիշողության տարիքային առանձնահատկությունները, զարգացումը:

Մենմոտեխնիկաներ:

6. Մտածողության հասկացությունը: Մտածողության տեսակները:

7. Մտածողության տեսությունները:
8. Մտածողություն և գիտելիք:
9. Դրդապատճառները և հույզերը մտածողական գործունեությունում:
10. Մտածողության անհատական առանձնահատկությունները:
11. Զարգացման սկզբունքը մտածողության հոգեբանությունում:
12. Ինտելեկտի հիմնախնդիրը:
13. Լեզու և խոսք:
14. Խոսքի տեսությունները
15. Երևակայությունը որպես ճանաչողական գործընթաց:
16. Երևակայության տեսությունները: Երևակայության զարգացումը և նրա գնահատումը:
17. Երևակայության դերը ստեղծագործական աշխատանքում:

Գործնական աշխատանքների թեմատիկ պլան

1. Կարճատև հիշողության ծավալի ուսումնասիրում (Ջեկոբսի մեթոդը):
2. Օպերատիվ հիշողության առանձնահատկությունների ուսումնասիրում:
3. Ոչ կամաձին և կամաձին մտապահման արդյունավետության ուսումնասիրումը (Պ. Զինչենկոյի մեթոդիկան):
4. Անմիջական և միջնորդավորված մտապահման ուսումնասիրումը:
5. Պիկտոգրամաների մեթոդը:
6. Մտապահման վրա նյութի իմաստավորվածության ազդեցության ուսումնասիրումը:
7. Մտապահման կախվածությունը անձի դիրքորոշումներից:
8. Հիշողության մեջ պահպանման ժամանակ նյութի որակական փոփոխությունների ուսումնասիրումը:
9. Մտածողական գործընթացների ռիզիկոյության ուսումնասիրումը (նախկինի փորձի ազդեցությունը խնդրի լուծման միջոցի վրա):
10. Ակնառու-պատկերավոր մտածողության ուսումնասիրում («Պիկտոգրամա» մեթոդիկան):
11. Ստեղծագործական և վերարտադրողական մտածողության ուսումնասիրում (դիրքորոշման ազդեցությունը մտածողական գործունեության յուրահատկության վրա):
12. Արտիկուլյար խոչընդոտների առկայության պարագայում խոսքի հասկացման ուսումնասիրում:
13. Պատկերացումներ և երևակայություն:
14. Երևակայության արդյունավետության ուսումնասիրում:
15. Երևակայության անհատական առանձնահատկությունների ուսումնասիրում:
16. Ստեղծագործական երևակայության ուսումնասիրում

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Зинченко Т. П. Память в экспериментальной и когнитивной психологии. – СПб.: Питер, 2002.
2. Надлер Дж., Хибино М., Фаррелл Дж. Мышление полного спектра. Минск, Попурри, 2001.
3. Психология памяти Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В. Ф. Спиридонова. М.: Астрель, 2008.
4. Хозиев В.Б. Практикум по общей психологии: Учебное пособие для студ. Высш. Учеб. Заведений. М.: Изд. Центр «Академия», 2003.- С. 14-28, 63-122, 134-140
5. Philip Quinlan, Philip T. Quinlan, Ben Dyson. 2008. *Cognitive Psychology*. Publisher-Pearson/Prentice Hall.

1. 1306/F08	2. Փորձարարական հոգեբանություն	3. 6 ECTS կրեդիտ
4. 5 ժամ/ շաբ.	5. դաս.- 3, գործ.- 2	
6. 4-րդ գարնանային կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողներին ծանոթացնել հոգեբանության մեջ փորձարարական հետազոտությունների տեսություններին, մեթոդաբանության հիմքերին, • կողմնորոշել հոգեբանական հետազոտությունների մեթոդների համակարգում, • ձևավորել գիտելիքներ հոգեբանական գիտափորձի ծրագրավորման և իրականացման համար: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ճանաչել հոգեբանական հետազոտությունների հիմնական ծրագրերի և գիտափորձի կազմակերպման ձևերը; 2. ներկայացնել հոգեբանական հետազոտության կազմակերպման տրամաբանությունը: <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 3. կողմնորոշվել հոգեբանական հետազոտության մեթոդաբանական հիմնախնդիրներում և իրականացնել հետազոտություն, <p><i>գ. քննհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 4. ինքնուրույն օգտագործել գիտելիքները գիտափորձերի կազմակերպման, ծրագրավորման և այլ էմպիրիկ հետազոտությունների համար: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p><i>Ա1.Նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, սահմանելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:</i></p> <p><i>Ա3.Սահմանելու հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հիմնական մեթոդները, մատնանշելու դրանց կիրառման ուղիները, հնարավորությունները և սահմանափակումները:</i></p> <p><i>Բ1.Կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:</i></p> <p><i>Բ2.Գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ:</i></p> <p><i>Բ5. Կազմակերպելու իր աշխատանքային և/կամ ուսումնական գործունեությունը ստացած տեսագործնական գիտելիքներին համապատասխան</i></p> <p><i>Գ3.քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:</i></p> <p><i>Գ4.պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների</i></p>		

արդյունքները, վարելու գիտական բանավեճեր

11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները. (նշել դասընթացի ընթացքում կիրառվող մեթոդները)

1. *դասախոսություն,*
2. *սեմինար պարապմունք,*
3. *քննարկում,*
4. *պրակտիկ աշխատանքներ,*
5. *հետազոտական աշխատանքների իրականացում և դրա ներկայացում,*

12. Գնահատման մեթոդները և

չափանիշներն են. Եզրափակիչ գնահատմամբ դասընթացի համար

1. 1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր*.
Գնահատման մեթոդ. ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով:
Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն:
2. 2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը *5 միավոր*..
Գնահատման մեթոդ. ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին գրավոր կերպով:
Գնահատման չափանիշներ. մտքի տրամաբանվածություն, ինքնուրույնություն, նյութի ճիշտ մեկնաբանություն:
3. Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը *10 միավոր*..
Գնահատման մեթոդ. բանավոր քննություն ըստ առաջադրված հարցաշարի:
Գնահատման չափանիշներ. հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական պատասխաններ: Ամբողջականություն և նյութի տիրապետման աստիճան:

13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.

Բաժին 1. Փորձարարական մեթոդը որպես հոգեբանական վարկածների ստուգման նորմատիվների համակարգ և հետազոտողի պրակտիկ գործունեության տեսակ: Գիտափորձը հոգեբանական հետազոտությունների համակարգում: Հոգեբանական վարկածներ և տեսական վերակառուցումներ էքսպերիմենտալ մեթոդի շրջանակներում: Փորձարարական փաստերի և ամփոփումների տրամաբանությունը:

Բաժին 2. Հոգեբանական գիտափորձի պլանավորման հիմքերը և փորձարարական սխեմաների դասակարգումը: Գիտափորձերի վալիդությունը որպես փորձարարական վերահսկման նպատակ: Հոգեբանական գիտափորձերի տեսակներ:

Բաժին 3. Կորեկյացիոն մոտեցումը հոգեբանական հետազոտություններում: Քվազիէքսպերիմենտներ և փորձարարական մեթոդին ձգտող հետազոտություններ: Հոգեբանական հետազոտության կազմակերպման մեթոդաբանական հարցեր:

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Ավանեսյան Հ. Մ. Փորձարարական հոգեբանություն: Ուսումնական ձեռնարկ, Էդիթ Պրինտ, Երևան, 2010
2. Ավանեսյան Հ. Մ. Հոգեբանական գիտափորձերի պրակտիկում. Ուս. ձեռնարկ: Հեղ. հրատ., Երևան, 2015, 50 էջ
3. Зароченцев К. Д., Худяков А. И., Экспериментальная психология/ Учебник. М., 2005.
4. Корнилова Т. В., Экспериментальная психология: Теория и методы: Учебник для вузов. М.: Аспект Пресс, 2003.
5. Handbook of Psychology, Volume 4: Experimental Psychology//
<https://psihologiapentrutoti.files.wordpress.com/2011/08/handbook-of-psychology-vol-04-experimental-psychology.pdf>

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ

«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»

ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն», 031301.07.7
2. Բուհը	Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Հոգեբանության մագիստրոս
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2019-2020
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

Մագիստրոսի ծրագրում ընդունելությունը իրականացվում է ըստ ԵՊՀ համապատասխան կանոնակարգի¹. ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ-ի և այլ բուհերի տվյալ մասնագիտության վերջին երեք տարվա շրջանավարտները, որոնց միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը) կազմում է 13 և բարձր միավոր: Իսկ 13-ից ցածր ՄՈԳ ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ տվյալ մասնագիտության բակալավրի կրթական ծրագրին համապատասխան հարցաշարով անցկացված քննության արդյունքների հիման վրա:

¹ ԵՊՀ առկա և հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգեր (վերահաստատվում են ամեն տարի):

9. Ծրագրի նպատակները

Ծրագիրը նպատակ ունի.

- զարգացնելու ուսանողների մասնագիտական կարողությունները՝ տրամադրելով խորացված ուսուցում անձի հոգեբանության բնագավառում՝ հասարակության զարգացման ժամանակակից միտումների համատեքստում անձի կայուն զարգացման հիմնախնդիրները հասկանալու, վերլուծելու և մեկնաբանելու համար,
- տրամադրելու ուսանողներին մասնագիտական այնպիսի գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են հետազոտական, հոգեախտորոշիչ, խորհրդատվական, լուսավորչական և զարգացնող աշխատանք իրականացնելու համար սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների շրջանակներում,
- օժանդակելու ուսանողներին՝ զարգացնելու իրենց մասնագիտական գիտելիքները և կարողությունները կրթության, առողջապահության և մասնագիտական գործունեության ոլորտներում՝ հոգեբանական ծառայության կայացմանը նպաստելու համար:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1 . սահմանելու անձի հոգեբանության բնագավառի զարգացման պատմամշակութային նախադրյալները, մեթոդաբանական հիմքերը և զարգացման ժամանակակից միտումները,

Ա2 . ներկայացնելու անձի հոգեբանության ժամանակակից հոգեբանական մակրո- և միկրոտեսությունները և հայեցակարգերը,

Ա3 . բացատրելու անձի տարիքային տարբեր փուլերի զարգացման առանձնահատկությունները, գործընթացները և օրինաչափությունները,

Ա4 . հիմնավորելու քանակական և որակական մեթոդների կիրառման համապատասխանությունը հետազոտական նպատակներին,

Ա5 . սահմանելու հոգեբանական (անհատական և խմբային) խորհրդատվական աշխատանքի իրականացման սկզբունքները, առանձնահատկությունները և տեսակները,

Ա6. բնութագրելու հոգեբանական աջակցության ծառայության առանձնահատկությունները կրթության, առողջապահության և մասնագիտական գործունեության ոլորտներում:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. իրականացնելու անձի և զարգացման հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ՝ օգտագործելով արդյունքների վերլուծության որակական և քանակական մեթոդները,

Բ2 . վերլուծելու և ներկայացնելու անձի նույնականացման միտումները, վարքաձևերը և համոզմունքների համակարգը ժամանակակից սոցիալ-մշակութային փոփոխությունների համատեքստում,

Բ3 . կիրառելու անձի ուսումնասիրման հոգեախտորոշիչ (ինքնագնահատման և պրոյեկտիվ) մեթոդները խորհրդատվական աշխատանքում,

Բ4. իրականացնելու անհատական և խմբային հոգեբանական խորհրդատվական աշխատանք,

Բ5 . կիրառելու հոգեբանական խորհրդատվության սկզբունքները կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտներում սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ կայացնելու ուղղությամբ,

Բ6 . իրականացնելու անձնային աճին և ինքնագարգացմանն ուղղված խորհրդատվական և լուսավորչական աշխատանք (psychoeducation) կրթական, առողջական, սոցիալական կարիքների բավարարման և միջավայրում ինտեգրման ուղղությամբ:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Գ1. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ,

Գ2. համագործակցելու գործընկերների և հարակից ոլորտի մասնագետների հետ, համակարգելու մասնագիտական խմբերի աշխատանքներ

Գ3. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,

Գ4. պահպանելու մասնագիտական էթիկայի սկզբունքները:

11. Ծրագրի ուսումնական պլանը

–

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

Գնահատման ձևերն են՝ ստուգաք, առանց ընթացիկ գնահատում (1 եզրափակիչ քննություն), 2 ընթացիկ քննություն և եզրափակիչ գնահատում (2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն):

Ընթացիկ գրավոր քննությունները ենթադրում են ամփոփ վերլուծական պատասխաններ ըստ հարցատոմսի, թեստային առաջադրանքներ, իսկ ընթացիկ բանավոր քննությունները՝ էսսեների պատրաստում և բանավոր ներկայացում, ինքնուրույն և խմբային աշխատանքների (հետազոտական նախագիծ, հոգեթերապևտիկ գրույցի, հոգեախտորոշիչ մեթոդիկայի կիրառում, գործնական աշխատանք և այլն) կատարում և բանավոր ներկայացում:

Եզրափակիչ բանավոր քննությունները անցկացվելու են ըստ հարցատոմսերի և/կամ ինքնուրույն աշխատանքների ներկայացումների:

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» ծրագրի շրջանավարտները ինքնուրույն մասնագիտական գործունեության հնարավորություն կունենան այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝

- գիտական ուսումնասիրություններ,
- հոգեբանության դասավանդում,
- հոգեախտորոշում, հոգեբանական խորհրդատվություն և աջակցություն առողջապահական, մասնագիտական գործունեության, սոցիալական խնամքի և կրթական ոլորտներում:

Շրջանավարտները կարող են աշխատել հոգեբանական ծառայության կենտրոններում որպես անհատական կամ խմբային խորհրդատվություն իրականացնող մասնագետներ, խնամքի և պաշտպանության, ցերեկային կենտրոններում որպես սոցիալական խնամք և հոգեբանական աջակցություն իրականացնող մասնագետներ, բժշկական և վերականգնողական հաստատություններում հոգեբանական խորհրդատվություն իրականացնող մասնագետներ, հիմնական և ավագ դպրոցներում որպես հոգեախտորոշիչ, զարգացնող, հոգեշտկող և աջակցող հոգեբան-մասնագետներ, բուհերի ռեսուրսային կոնտրոլներում որպես անհատական խորհրդատուներ, մասնագիտական կողմնորոշման կենտրոններում որպես գնահատում և խորհրդատվություն իրականացնող մասնագետներ, գիտակրթական կենտրոններում որպես հետազոտողներ, բիզնես կազմակերպություններում որպես անձնակազմի հետ աշխատող անհատական խորհրդատուներ, ինչպես նաև՝ իրականացնել մասնավոր խորհրդատվական աշխատանք: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Մույն ծրագրով ուսումնառության օժանդակության համար առկա են բազմազան ռեսուրսներ՝ դասախոսների անձնական միջոցներով և ամբիոնի դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ձեռքբերված ժամանակակից մասնագիտական գրականություն (հայերեն, ռուսերեն և անգլերեն), էլեկտրոնային գրադարան, քանակական և որակական հետազոտությունների համար նախատեսված համակարգչային ծրագրեր, ինչպես նաև տեսաձայնային ուսումնական նյութեր (մասնագիտական հարցեր լուսաբանող ֆիլմեր, անվանի գիտնականների դասախոսություններ և վարպետության դասեր):

Ծրագրի իրականացման համար գիտահետազոտական բազա է հանդիսանում «Անձ և սոցիալական միջավայր» գ/հ լաբորատորիան: Ուսանողները մասնակցում են լաբորատորիայի աշխատանքներին, որոնց շրջանակներում ուսանողների մեծ մասը պատրաստում է իրենց մագիստրոսական թեզերը: Ուսանողները մասնակցում են նաև միջազգային համագործակցության շրջանակներում լաբորատորիայի կողմից իրականացվող միջմշակութային ուսումնասիրություններին՝ կատարելով տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության աշխատանքներ:

Ծրագրի կրթական վերջնարդյունքների ձեռքբերման համար կիրառվում են դասավանդման և ուսումնառության նորարարական մեթոդներ: Դասախոսությունները ընթանում են ինտերակտիվ եղանակով, խրախուսվում է և խթանվում է ուսանողների մասնակցությունը քննարկումներին, կազմակերպվում են հրավիրված դասախոսների հետ հանդիպումներ և առցանց դասախոսություններ: Տեսական ուղղվածություն ունեցող ուսումնական մոդուլների դեպքում կիրառվում են ուսումնառության հետևյալ մեթոդները՝ մասնավորապես, թեմային առնչվող գիտական հոդվածների վերլուծություն, էսսեների պատրաստում, հետազոտական նախագծերի մշակում: Տեսագործական ուսումնական մոդուլների դեպքում կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ՝ մասնավորապես, հրավիճակի մոդելավորում, դեպքի վերլուծություն, դերային խաղեր, ինչպես նաև ինքնուրույն աշխատանք ենթադրող արտալսարանային ակտիվություն (հոգեթերապևտիկ զրույցի, հոգեախտորոշիչ մեթոդիկայի անցկացում, արդյունքների վերլուծություն, ինքնառեֆլեքսիա):

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

Տվյալ կրթական ծրագիրը մշակվել է ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակի, ինչպես նաև ոլորտային նկարագրիչներին համաձայն: Կրթական ծրագրի մշակման համար հիմք են ծառայել միջազգային ծրագրային կողմնորոշիչները և չափորոշիչները: Մասնավորապես, ուսումնասիրվել է Միացյալ թագավորության Որակի ապահովման գործակալության (UK's Quality Assurance Agency) Հոգեբանական խարհրդատվություն ծրագրային կողմնորոշիչները (Counselling and Psychotherapy, Subject Benchmark Statement): Հիմնվել ենք նաև առաջատար բուհերի և հավատարմագրված կրթական ծրագրերի վրա. Կանադայի՝ The University of British Columbia (MA in Counseling Psychology), ԱՄՆ-ի՝ University of Minnesota (MA in Counseling Psychology), Ռուսաստանի՝ НИУ ВШЭ (մագիստրոսական ծրագիր՝ Консультативная психология. Персонология, Специализации: кзистенциальный анализ и логотерапия, Человекоцентрированный подход, Транзактный анализ), Санкт-Петербургский государственный университет (մագիստրոսական ծրագրեր՝ Психология личности/Профиль

1 - Экзистенциальная психология, Профиль 2 - Индивидуальное психологическое консультирование, Психическое здоровье/Профиль-Консультативная психология) և ՄՊԳՄ (մագիստրոսական ծրագիր՝ Психологическое консультирование, Личностно-ориентированное консультирование, Возрастно-психологическое консультирование):

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

2014-2016թթ. ընթացքում PICASA_TEMPUS ծրագրի շրջանակներում «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» ծրագրի կրթական վերջարդյունքները և դասավանդման, ուսումնառության մեթոդները վերանայվել են միջազգայնացման սկզբունքներին և չափանիշներին համաձայն, մասնավորապես, Մեծ Բրիտանիայի Ռոհեմպտոն համալսարանի հետ համագործակցության արդյունքում:

18. Կրթական ծրագիրը սպասարկող դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ

1. Ընդհանրական կարողություններ

Դասավանդման և հոգեբանամանկավարժական

- Ուսանողակենտրոն մեթոդաբանության իմացություն և կիրառման կարողություն դասընթացի մշակման և իրականացման գործում:
- Դասավանդման և ուսուցանման ինտերակտիվ և նորարարական մեթոդների կիրառման, չափանիշահեն գնահատման կարողություն:
- Ուսանողին աջակցելու, մոտիվացնելու և անձնային ուժեղ կողմերի շեշտադրման կարողություն:

Հետազոտական

- հետազոտության քանակական և որակական մեթոդների իմացություն,
- հետազոտական նախագծեր մշակելու, իրականացնելու և ղեկավարելու կարողություն,
- տարաբնույթ գիտական աղբյուրների հետ աշխատելու, ինչպես նաև համացանցային տեղեկատվական ռեսուրսներից օգտվելու հմտություն,

Հաղորդակցման

- լսարանի հետ բանավոր հաղորդակցվելու հմտություն,
- միջանձնային հաղորդակցման հմտություններ,
- օտար լեզվի իմացություն (B1 մակարդակի իմացությունը ցանկալի է):

S2S կիրառություն

- բազային համակարգչային (MS Office փաթեթի ազատ տիրապետում՝ Word, Excel, Power-Point) հմտություններ,
- ժամանակակից սոցիալական հարթակներից օգտվելու հմտություն,
- լուսացուցադրություններ պատրաստելու և ներկայացնելու հմտություններ (pptx, prezi, canva և այլն):

Այլ կարողություններ

- ժամանակի կառավարման կարողություն,
- կոնֆլիկտների հաղթահարման և համագործակցելու կարողություններ

2. Մասնագիտական գիտելիքներ և կարողություններ

- Հասարակության զարգացման ժամանակակից միտումների համատեքստում անձի կայուն զարգացման հիմնախնդիրները հասկանալու, վերլուծելու և մեկնաբանելու կարողություն,
- Անձի հոգեբանության, զարգացման հոգեբանության, սոցիալական հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության արդի հիմնախնդիրների և ժամանակակից միտումների մասին գիտելիքներ,
- Անձի հոգեբանության, զարգացման հոգեբանության և հոգեբանական խորհրդատվությանն առնչվող մեթոդական և կիրառական բնույթի խնդիրների ուսումնասիրման կարողություն քանակական և/կամ որակական մեթոդաբանությամբ,
- Հոգեբանական աջակցության տարբեր ձևերի՝ հոգեախտորոշիչ, խորհրդատվական, լուսավորչական և հոգեբանական զարգացնող աշխատանք իրականացնելու կարողություն,
- Հոգեբանական ծառայության կազմակերպման սկզբունքների իմացություն և կարողություն կրթության, առողջապահության ոլորտներում:

3. Ընդհանուր պահանջներ

Մասնագիտական պահանջներ

- գիտական աստիճան և/կամ արտերկրյա բուհում ստացած մագիստրոսի կոչում հոգեբանության կամ հարակից ոլորտում կամ առնվազն 5 տարվա հոգեբանական խորհրդատվական/հոգեթերապևտիկ փորձի առկայություն կրթության կամ առողջապահության ոլորտներում և/կամ մասնավոր պրակտիկայի շջանակներում,
- վերջին 5 տարում առնվազն 1 գիտական և/կամ մեթոդական հրատարակություն առկայություն,
- վերջին 5 տարում առնվազն 2 մասնակցություն միջազգային գիտաժողովների և/կամ աշխատաժողովների,
- վերջին 5 տարվա ընթացքում մասնակցություն տեղական կամ միջազգային վերապատրաստումների և/կամ մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացների:

Մանկավարժական փորձ

- մասնագիտական դասընթացների դասավանդման և/կամ վերապատրաստումներ (թրեյնինգներ) իրականացնելու առնվազն 3 տարվա փորձ:

Այլ պահանջներ

- ուսանողական հարցման արդյունքներով ստացված գնահատականների միջինը՝ առնվազն 4,0 (գործող դասախոսների համար)

«ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Օրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություններ	
Ա1	սահմանելու անձի հոգեբանության բնագավառի զարգացման պատմամշակութային նախադրյալները, մեթոդաբանական հիմքերը և զարգացման ժամանակակից միտումները	Բ1	իրականացնելու անձի և զարգացման հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ՝ օգտագործելով արդյունքների վերլուծության որակական և քանակական մեթոդները
Ա2	ներկայացնելու անձի հոգեբանության ժամանակակից հոգեբանական մակրո- և միկրոտեսությունները և հայեցակարգերը	Բ2	վերլուծելու և ներկայացնելու անձի նույնականացման միտումները, վարքաձևերը և համոզմունքների համակարգը ժամանակակից սոցիալ-մշակութային փոփոխությունների համատեքստում
Ա3	բացատրելու անձի տարիքային տարբեր փուլերի զարգացման առանձնահատկությունները, գործընթացները և օրինաչափությունները	Բ3	կիրառելու անձի ուսումնասիրման հոգեախտորոշիչ (ինքնագնահատման և պրոյեկտիվ) մեթոդները խորհրդատվական աշխատանքում
Ա4	հիմնավորելու քանակական և որակական մեթոդների կիրառման համապատասխանությունը հետազոտական նպատակներին	Բ4	իրականացնելու անհատական և խմբային հոգեբանական խորհրդատվական աշխատանք
Ա5	սահմանելու հոգեբանական (անհատական և խմբային) խորհրդատվական աշխատանքի իրականացման սկզբունքները, առանձնահատկությունները և տեսակները	Բ5	կիրառելու հոգեբանական խորհրդատվության սկզբունքները կրթական, առողջապահական և սոցիալական ոլորտներում սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ կայացնելու ուղղությամբ
Ա6	բնութագրելու հոգեբանական աջակցության ծառայության առանձնահատկությունները կրթության, առողջապահության և մասնագիտական գործունեության ոլորտներում	Բ6	իրականացնելու անձնային աճին և ինքնազարգացմանն ուղղված խորհրդատվական և լուսավորչական աշխատանք (psychoeducation) կրթական, առողջական, սոցիալական կարիքների բավարարման և միջավայրում ինտեգրմանն ուղղությամբ
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1	կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ	Գ3	պատրաստելու զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր
Գ2	համագործակցելու գործընկերների և հարակից ոլորտի մասնագետների հետ, համակարգելու մասնագիտական խմբերի աշխատանքներ	Գ4	պահպանելու մասնագիտական էթիկայի սկզբունքները

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ

«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»

ԾՐԱԳՐԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

1. 1308/Մ08	2. Որակական հետազոտությունները անձի հոգեբանության մեջ	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/ շաբ.	5. դաս.-2	
6. 2-րդ՝ գարնանային կիսամյակ	7. առանց եզրափակիչ գնահատման	
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • ընդլայնել ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը որակական հետազոտության տեսական և մեթոդաբանական գիտելիքներով, • համալրել ուսանողների հետազոտական կարողությունները և հմտությունները անձի ճանաչման/հոգեախտորոշման և խորհրդատվական գործընթացում, • նպաստել ուսանողների մոտ վերլուծականության, միջգիտակարգային մտածողության ու միջբնագավառային գիտելիքների զարգացմանը՝ անձի հիմնախնդրի հասկացման մարտահրավերների համատեքստում: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնելու և մեկնաբանելու որակական հետազոտության հարացույցը, տեսական հիմքերը, որակական և քանակական կողմնորոշումների առանձնահատկությունները, 2. որոշելու և հիմնավորելու հետազոտական նպատակին/խնդրին լավագույնս համապատասխանող որակական հետազոտության տեսական շրջանակը և մեթոդաբանությունը: <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 3. պատրաստելու որակական հետազոտության նախագիծ՝ ըստ ընտրված կամ առաջադրված նպատակի, 4. վերաձևակերպելու քանակական մեթոդաբանությամբ սահմանված հետազոտական խնդիրը որակական մեթոդաբանության շրջանակի, 5. ցուցաբերելու հարցազրույցի անցկացման հմտություններ, 6. կատարելու որակական տվյալների մշակում: <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 7. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ, 8. գրելու հետազոտության վերլուծական զեկույց, վարելու գիտական բանավեճ: 		

<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Ա4. հիմնավորելու քանակական և որակական մեթոդների կիրառման համապատասխանությունը հետազոտական նպատակներին, Բ1 . իրականացնելու անձի և զարգացման հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ՝ օգտագործելով արդյունքների վերլուծության որակական և քանակական մեթոդները, Բ2 . վերլուծելու և ներկայացնելու անձի նույնականացման միտումները, վարքաձևերը և համոզմունքների համակարգը ժամանակակից սոցիալ-մշակութային փոփոխությունների համատեքստում, Գ1. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ, Գ3. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն, գործնական պարապմունքներ, 2. հանձնարարված գրականության ընթերցում և քննադատական վերլուծություն, 3. մասնակցություն քննարկումներին, 4. ինքնուրույն արտալսարանային անհատական և խմբային աշխատանքներ (հետազոտության նախագծի կազմում, գործիքների մշակում, պիլոտային հետազոտության անցկացում):
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են</p> <ol style="list-style-type: none"> 1. 1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր. Գնահատման մեթոդները՝ ամփոփ վերլուծական պատասխաններ հարցերին, ինքնուրույն աշխատանքի գնահատում (հարցազրույցի հարցաշարի կազմում և կիրառում, պիլոտային տվյալների ներկայացում): Գնահատման չափանիշները՝ ինքնուրույն վերլուծություն, հարցազրույցի կազմման և անցկացման սկզբունքների պահպանում: 2. 2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր. Գնահատման մեթոդները՝ ինքնուրույն աշխատանքի գնահատում (խմբային հետազոտական նախագիծ և բանավոր ներկայացում): Գնահատման չափանիշները՝ ընտրված հիմնախնդրի և մեթոդաբանության միջև համապատասխանություն, ծավալի համարժեքությունը թիմային աշխատանքին, կատարած հետազոտության որակ:
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Բաժին 1. Որակական մեթոդաբանության հիմքերը և սկզբունքները:</p> <p>Բաժին2. Որակական հետազոտության անցկացման և տվյալների հավաքագրման մեթոդներ:</p> <p>Բաժին 3. Որակական համալիր/համադրված մոտեցումներ:</p> <p>Բաժին 4. Տվյալների վերլուծություն, մեկնաբանություն և շարադրում:</p> <p>Բաժին 5. Որակական հետազոտության պրակտիկ կիրառման ոլորտները:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Улановский, А. М. (2006). Качественная методология и конструктивистская ориентация в психологии. Вопросы психологии, 3, 27-37. 2. Denzin, N., & Lincoln, Y. (2008). Collecting and interpreting qualitative materials (Vol. 3). Sage. 3. Smith, J. A. (Ed.). (2015). Qualitative psychology: A practical guide to research methods. Sage. 4. Silverman, D. (2013). Doing qualitative research: A practical handbook. SAGE Publications Limited. 5. Willig, C., & Stainton-Rogers, W. (Eds.). (2007). The SAGE handbook of qualitative research in

1. 1308/U10	2. Անձի հոգեախտորոշման մեթոդներ	3. 6 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/ շաբ.	5. դաս.-2, գործ.-2	
6. 2-րդ գարնանային կիսամյակ	7. եզրափակիչ գնահատումով	
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթացնել ուսանողների անձի հետազոտման մեթոդներին, անդրադառնալ պրոյեկցիային որպես հոգեբանական ֆենոմենի, ծանոթացնել պրոյեկտիվ մեթոդների բազմազանությանը, • տրամադրել գիտելիքներ հոգեախտորոշիչ պրոյեկտիվ մեթոդիկաների վերաբերյալ, ձևավորել գործնական հմտություններ՝ առանձին մեթոդիկաների կիրառման համար, • խթանել անձի հոգեախտորոշման հիմնական պրոյեկտիվ թեստեր իմացությունը և որոշակի պրակտիկ հմտությունների ձեռքբերումը: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ընտրելու հոգեախտորոշիչ մեթոդ/մեթոդիկա անձի հետազոտման բնագավառում, հիմնավորելու մեթոդիկայի և խնդրի համապատասխանությունը, 2. ներկայացնելու առանձին հոգեախտորոշիչ պրոյեկտիվ մեթոդիկաների անցկացման ընթացակարգը և մեկնաբանման սկզբունքները, 3. ճանաչելու թեստային մեկնաբանություններում սեփական անձի սուբյեկտիվ ընկալումների հնարավոր չափը, դիրքորոշումները, սահմանափակումները: <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 4. կատարելու հոգեախտորոշիչ մեթոդիկաներով ստացվող քանակական և որակական տվյալների մշակում և կանխատեսել մեկնաբանման դժվարությունները, 5. համադրելու պրոյեկտիվ մեթոդիկաների մեկնաբանությունները հոգեախտորոշիչ այլ մեթոդներով ստացված արդյունքների հետ, 6. կիրառելու հոգեախտորոշիչ (պրոյեկտիվ) մեթոդների արդյունքները խորհրդատվական և ինքնազարգացմանն ուղղված լուսավորչական աշխատանքներում: <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 7. ձևակերպելու և լուծելու խնդիրներ, 8. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը: 		

<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Ա4. հիմնավորելու քանակական և որակական մեթոդների կիրառման համապատասխանությունը հետազոտական նպատակներին, Բ1. իրականացնելու անձի և զարգացման հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրություններ՝ օգտագործելով արդյունքների վերլուծության որակական և քանակական մեթոդները, Բ3. կիրառելու անձի ուսումնասիրման հոգեախտորոշիչ (ինքնագնահատման և պրոյեկտիվ) մեթոդները խորհրդատվական աշխատանքում, Գ1 . կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ, Գ4. պահպանելու մասնագիտական էթիկայի սկզբունքները:</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնասիրության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություններ և քննարկումներ, 2. անհատական գործնական աշխատանքներ կոնկրետ մեթոդիկաներ, 3. մասնագիտական հմտությունների ձևավորում և մարզում:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <ol style="list-style-type: none"> 1. 1-ին ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր. Գնահատման մեթոդները՝ հարցադրումներ և պատասխաններ: Ինքնուրույն աշխատանքի գնահատում, մեթոդիկայի արդյունքների բանավոր ներկայացում: Գնահատման չափանիշները՝ ինքնուրույն անցկացում, վերլուծություն, ընթացակարգի և մեկնաբանման սկզբունքների պահպանում: 2. 2-րդ ընթացիկ քննությունը գնահատվում է առավելագույնը 5 միավոր. Գնահատման մեթոդները՝ ինքնուրույն աշխատանքի գնահատում: Գնահատման չափանիշները՝ ընտրված հիմնախնդրի և մեթոդիկայի համապատասխանություն, հոգեախտորոշիչ տվյալների քանակական և որակական մշակումներ: 3. Եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 10 միավոր. Գնահատման մեթոդները՝ բանավոր հարցում: Գնահատման չափանիշները՝ դասընթացի նյութի յուրացում, ինքնուրույնություն մեկնաբանումներում, հոգեախտորոշիչ մեթոդներին ներկայացվող պահանջների տիրապետում:
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Բաժին 1. Անձի հետազոտումը որպես հոգեախտորոշիչ հիմնախնդիր: Բաժին 2. Անձի հոգեախտորոշման պրոյեկտիվ մեթոդներ: Բաժին 3. Թեմատիկ ապերցեպտիվ թեստեր: Բաժին 4. Անձնային կոնստրուկտների տեսություն: Բաժին 5. Սոնդիի դիմնկարների ընտրության թեստը:</p>

14. Հիմնական գրականության ցանկ.

1. Հոգեդիագնոստիկա: Ուսումնական ձեռնարկ / ԵՊՀ: Կարգ.՝ Ռ. Ստեփանյան, Ա. Գալստյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2012. էջ 146-176.
2. Проективная психодиагностика личности : учеб. пособие /О.А. Любичкая. – Хабаровск: Изд- во ДВГУПС, 2013.
3. Вартег Э., Уровневая диагностика / Пер. с нем. Е. Ю. Патяевой; Под ред. В. К. Калининко. Калининко В. К. Рисуночный тест Вартега.-М.: Смысл, 2006.
4. Соколова Е.Т. Психологическое исследование личности: проективные методики. - М., ТЕИС, 2002. – 150 с.
5. Собчик Л.Н. Модифицированная методика Сонди (тест восьми влечений). — СПб: Речь, 2002 (Метод портретных выборов - адаптированный вариант Сонди, практическое руководство).

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆարմացիայի ինստիտուտ

«Ֆարմացիա»

ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Ֆարմացիա 091601.01.6
2. Բուհը	Երևանի պետական համալսարան (ԵՊՀ)
3. Ծրագիրը հավատարմագրված է	–
4. Շնորհվող որակավորումը	Ֆարմացիայի բակալավր
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2019/2020
6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

<p>8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները</p> <p>Ընդունելությունը կատարվում է համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ», ՀՀ կառավարության որոշման (26 ապրիլի 2012 թվականի N 597 –Ն):</p> <p>Ընդունելության համար դիմորդը հանձնում է ընդունելության քննություններ հետևյալ առարկաներից</p> <p><<Քիմիա>> -պարտադիր</p> <p><<Կենսաբանություն>> կամ <<Ֆիզիկա>> -կամընտրական</p>
--

<p>9. Ծրագրի նպատակները</p> <p>Ծրագրի նպատակն է.</p> <ul style="list-style-type: none"> պատրաստել միջազգային չափորոշիչներին համապատասխանող բարձրորակ դեղագետ մասնագետներ, ուսանողներին օժտել ոլորտի հիմնարար
--

գիտելիքներով և կարողություններով, ինչը հնարավորություն կտա նրանց աշխատել դեղատներում, դեղերի արտադրություններում, դեղերի ոլորտը կարգավորող կառույցներում, մաքսային ծառայության ոլորտում, փորձագիտական կազմակերպություններում, առողջապահական, բժշկական, դատաբժշկական, գիտական ու կրթական հաստատություններում և դեղագետի կարիքը ունեցող այլ ոլորտներում,

- ուսանողներին տրամադրել հիմնարար գիտելիքներ որոշելու դեղերի հիմնական խմբերը միջազգային համակարգերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև վերլուծելու և գնահատելու կոնկրետ հիվանդության բուժման մեջ օգտագործվող դեղաբանական խմբերը՝ ելնելով դեղաբանական ազդեցությունից և ազդեցության մեխանիզմից,
- ուսանողներին ծանոթացնել դեղերի ձևաք բերման, որակի հսկման, տեղափոխման, պահպանման, արդյունավետության գնահատման, դեղերի շրջանառության կարգավորման ռազմավարության մշակման և նորմատիվ փաստաթղթային ձևակերպման գործընթացներին,
- ուսանողներին տրամադրել հիմնարար գիտելիքներ դեղանյութերի սինթեզի, կառուցվածքի հետազոտման և սերտիֆիկացման, ազդեցության մեխանիզմների ուսումնասիրման, դեղանյութերից նոր դեղաձևերի ստացման հետազոտական և կազմակերպչական գործունեությամբ զբաղվելու համար:

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Ա1. սահմանելու ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքները և հայեցակարգերը, բնապահպանական գլոբալ և լոկալ հիմնախնդիրները, ձևակերպելու մաթեմատիկայի ընդհանուր դրույթները,
- Ա2. ներկայացնելու քիմիական (անօրգանական և օրգանական) միացությունների կառուցվածքը, հատկությունները, անալիզի մեթոդները, դրանց թունաբանական ազդեցության, ինչպես նաև այդ նյութերի հետ աշխատելու անվտանգության կանոնները,
- Ա3. ներկայացնելու ֆիզիոլոգիայի և անատոմիայի հիմնական հիմունքները, նկարագրելու օրգանիզմի նյութափոխանակության հիմնական ուղիները, ինչպես նաև ախտաբանական պրոցեսների և ժառանգական հիվանդությունների առաջացման պատճառները ու հետազոտման նորագույն մեթոդները,
- Ա4. նկարագրելու դեղերի դեղաբանական հատկությունները, կիրառման անհամատեղելիությունը և կենսամատչելիությունը, ներկայացնելու ֆարմակոկինետիկայի, ֆարմակոդինամիկայի, ֆարմակոգենետիկայի, կենսատեխնոլոգիայի և այլ հիմնահարցերը,
- Ա5. ձևակերպելու դեղաբուսական հումքի հավաքի, մթերման, մշակման, նորմավորման և օգտագործման տեսական ու փորձարարական հիմունքները, լուսաբանելու դեղերի դեղատնային և գործարանային արտադրության

տեսական հիմունքները և տեխնոլոգիական կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը, գնահատելու դրանց որակը արտադրության տարբեր փուլերում նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան,

Ա6. ներկայացնելու դեղերի սինթեզի դեղագրքային անալիզի մեթոդները, որակի գնահատման և հսկման նորմերն ու պահանջները,

Ա7. սահմանելու դեղերի շրջանառության տարբեր օղակներում դեղագործական գործունեություն ծավալելու և կազմակերպելու սկզբունքներն ու կառավարման հիմունքները, կազմակերպելու դեղատան դեղատնային բազայի, դեղերի որակի հսկման լաբորատորիայի բոլոր աշխատանքը, կիրառելով նոր տնտեսագիտական, սոցիալ-հոգեբանական և կառավարման կազմակերպչական մեթոդներ:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. իրականացնելու տարբեր բնույթի քիմիական միացությունների սինթեզներ և կառուցվածքային հետազոտություններ, կանխատեսելու քիմիական փոխարկումների մեխանիզմները, նրանց թունաբանական ազդեցությունները և կանխարգելման ուղիները,

Բ2. ուսումնասիրելու ժամանակակից կենսաբանության, բուսաբանության, կենսատեխնոլոգիայի և կենսաբժշկագիտության հիմունքները և նվաճումները, ինչպես նաև կիրառական ոլորտները: Վերլուծելու օրգանիզմի և օրգան-համակարգերի կառուցվածքային առանձնահատկությունները և դրանց կարգավորման մեխանիզմները: Տարբերակելու մանրէների հիմնական խմբերը և լուսաբանելու դրանց դերը բնության մեջ ու մարդու կյանքում,

Բ3. աշխատելու դեղագործության ոլորտում տեղեկատվական աղբյուրների և անընդհատ նորացվող դեղերի հետ, ուսումնասիրելու դրանց ֆարմակոկինետիկական և ֆարմակոդինետիկական առանձնահատկությունները,

Բ4. կազմակերպելու և իրականացնելու դեղաբուսական հումքի հավաք, դեղերի դեղատնային և գործարանային արտադրություն, գնահատելու դրանց որակը արտադրության տարբեր փուլերում, շրջակա միջավայրի պահպանման և արտադրության սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման միջոցները,

Բ5. իրականացնելու դեղատնային գործունեության կազմակերպման աշխատանքներ, վերլուծելու դեղատան գործունեության տնտեսագիտական ցուցանիշերը, մշակելու ֆինանսական պլանն ու արտադրական ծրագիրը և միջոցներ ձեռնարկելու տնտեսագիտական արդյունավետության բարձրացման ուղղությամբ,

Բ6. լուսաբանելու դեղերի հիմնական դասերի ստացման եղանակները, ֆարմանալիզի ժամանակակից պահանջներն ու մոտեցումները, դեղերի կառուցվածքային առանձնահատկությունները, կանխատեսելու դրանց

կենսաբանական ակտիվությունը և դերը դեղաբանության մեջ, իրականացնելու ակտիվ բաղադրիչների քանակական և որակական որոշում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

- Գ1. աշխատելու թիմում, պատրաստելու զեկուցումներ և հաշվետվություններ, ընդհանրացնելու հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև ակտիվորեն մասնակցելու գիտաժողովներին, սեմինարներին և քննարկումներին,
- Գ2. օգտվելու դեղագործությանը վերաբերվող տեղեկատվական տարբեր աղբյուրներից (համացանց, էլեկտրոնային գրադարաններ, գովազդային նյութեր, տեղեկագրեր, գիտական հոդվածներ, հաշվետվություններ), վերլուծելու նոր տեղեկատվությունները, հասկանալու ժամանակակից բժշկագիտական գրականության տվյալները և կիրառել այն գործնականում,
- Գ3. մայրենի և որևէ օտար լեզվով մասնագիտական բնույթի տեղեկատվություն քաղելու տարբեր աղբյուրներից, ինչպես նաև իրականացնելու մասնագիտական բնույթի հաղորդակցում,
- Գ4. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը դեղագործության ոլորտի տարբեր գործառույթների իրականացման ժամանակ, լինի նախաձեռնող և պատասխանատու որոշումներ ընդունելիս և կատարելիս, դրսևորի մարդասիրություն, ձգտի ինքնակատարելագործման, վարի առողջ կենսակերպ և այն քարոզի,
- Գ5. մատչելի ձևով սպառողներին ներկայացնելու դեղերի հիմնական բնութագրերը և որոշակի խմբին պատկանելիությունը, համաձայն դեղերի միջազգային համակարգերի պահանջների:

11. Ծրագրի ուսումնական պլանը

Կցված է

12. Ուսումնական պլանի քարտեզը

Կցված է

13. Գնահատման ձևերը

- գրավոր և բանավոր ընթացիկ քննություններ
- գրավոր և բանավոր ընթացիկ ստուգումներ
- եզրափակիչ բանավոր քննություններ,
- առանց ընթացիկ գնահատման բանավոր քննություններ
- զեկուցումներ,
- ռեֆերատներ

14. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

«Ֆարմացիա» բակալավրիատի ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել դեղագործության և դրան հարակից մասնագիտական ոլորտներում գործող հետևյալ կառույցներում՝

- *Հանրային և հիվանդանոցային դեղատներ (դեղագետ),*
- *Դեղերի շրջանառության ոլորտը կարգավորող մարմիններ և կառույցներ (ՀՀ առողջապահության նախարարություն, Առողջապահական տեսչական մարմին, Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն և այլն),*
- *Դեղերի արտադրությունում (որակավորված անձ)*
- *Արտասահմանյան մատակարարների/դեղարտադրողների հայաստանյան ներկայացուցչություններում (դեղագետ-ներկայացուցիչ),*
- *Գիտահետազոտական և կրթական հաստատություններ,*
- *Դեղագործական կրթություն պահանջող այլ ոլորտներում:*

Ծրագրի շրջանավարտները կարող են «Ֆարմացիա» մասնագիտությամբ շարունակել իրենց ուսումը ինչպես ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայում, այնպես էլ ԵՊԲՀ-ի և ՀՀ ԳԱԱ տարբեր մասնագիտական ինստիտուտների մագիստրատուրաներում, Ամերիկյան համալսարանում և այլն:

15. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ծրագրով սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերմանը նպաստում են Ֆարմացիայի ինստիտուտի կազմում գործող երեք մասնագիտական ամբիոնները՝ «Կենսաբժշկագիտության», «Ֆարմատեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման» և «Ֆարմաքիմիայի և ֆարմակոգնոզիայի», որոնք հազեցած են դեղատնային և անալիտիկ ժամանակակից սարքավորումներով կահավորված ուսումնական և ուսումնագիտական լաբորատորիաներով (դեղատնային և գործարանային տեխնոլոգիայի, դեղաբանության, դեղագրքային անալիզի, դեղագիտական քիմիայի, և այլն) և աշխատասենյակներով:

Ինստիտուտում առկա են համակարգիչներով հազեցած լսարաններ, որոնք հնարավորություն են տալիս կազմակերպելու դիտակտիկ նյութերով հազեցած դասախոսություններ, ինչպես նաև հեռուսուցմամբ և առցանց դասախոսություններ:

Դասընթացների լիարժեք յուրացման համար ուսանողներին տրամադրվում են նաև էլեկտրոնային նյութեր և գրքեր, իսկ որոշ տպագիր գրքեր և ուսումնամեթոդական ձեռնարկներ ուսանողները կարող են ձեռք բերել ԵՊՀ գրադարանից և Ֆարմացիայի ինստիտուտի գրասենյակից:

16. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք

օգտագործվել են ծրագիրը մշակելիս

- Չեխիայի Հանրապետության Պրահայի <<Չարլսի համալսարանի>> ֆարմացիայի ֆակուլտետի ուսումնական ծրագիր
- ԱՄՆ Կանզասի համալսարանի Ֆարմացիայի դպրոցի ուսումնական պլան
- ՌԴ Բելգորոդի պետական ազգային հետազոտական համալսարանի դեղագիտական ֆակուլտետի <<Ֆարմացիա>> մասնագիտության ուսումնական ծրագիր
- ՌԴ Սանկտ Պետերբուրգի պետական Քիմիադեղագործական ակադեմիայի դեղագիտական ֆակուլտետի ուսումնական ծրագիր
- ՌԴ Պյատիգորսկի պետական դեղագիտական ակադեմիայի դեղագիտական ֆակուլտետի ուսումնական ծրագիր
- ՌԴ Մոսկվայի Ի.Ս.Սեչենովի անվան համալսարանի ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմացիա» մասնագիտության ուսումնական ծրագիր
- ՌԴ Մոսկվայի պետական համալսարանի ֆունդամենտալ բժշկության ֆակուլտետի «Ֆարմացիա» մասնագիտության ուսումնական ծրագիր
- Բելառուսի պետական բժշկական համալսարանի «Ֆարմացիա» մասնագիտության ուսումնական ծրագիր
- Վիտեբսկի պետական բժշկական ինստիտուտի դեղագիտական ֆակուլտետի «Ֆարմացիա» մասնագիտության ուսումնական ծրագիր

17. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Երևանի պետական համալսարանի «Ֆարմացիայի» ինստիտուտը և Ռուսաստանի Բելգորոդի պետական հետազոտական համալսարանի դեղագործության ֆակուլտետը հաստատել են բակալավրիատի համատեղ ուսումնական պլան, ինչը հնարավորություն է տալիս ծրագրի շրջանավարտներին ստանալու «Ֆարմացիա» մասնագիտությամբ և՛ Երևանի պետական համալսարանի, և՛ Ռուսաստանի Բելգորոդի պետական հետազոտական համալսարանի դիպլոմներ:

18. Կրթական ծրագիրը սպասարկող դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ

1. Ընդհանրական կարողություններ

Դասավանդման/մանկավարժական

- Մասնագիտական մանկավարժական գիտելիքների և հմտությունների լիարժեք տիրապետում (ըստ հաստատված առարկայական ծրագրի), առարկայի կոնցեպտուալ հիմքերի գիտակցում, նյութի պարզ և հասկանալի մատուցում, դասավանդման գործընթացում նորարական և ինտերակտիվ մեթոդների կիրառում,
- ուսանողների հետ հաղորդակցման ունակություն, նրանց մոտ մասնագիտական հմտությունների, վերլուծական մտածողության և ինքնուրույնության զարգացում,

- առարկայական ծրագրեր, հավելյալ օժանդակ նյութեր մշակելու հմտություններ և ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի դրանք իրականացնելու պատասխանատվություն:

Հետազոտական

- Ֆարմացիայի և դրան հարակից ոլորտներում հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ (տպագրված հոդվածներ, միջազգային գիտաժողովներում զեկույցներ, դրամաշնորհներ),
- հետազոտական մեթոդների իմացություն, գիտական նորույթների վերաբերյալ ինֆորմացիայի հավաքում և վերլուծում, հետազոտական աշխատանքի արդյունքի և արդիականության կանխատեսում, ստացված արդյունքների օգտագործում ուսումնական պրոցեսում, ուսանողների ներգրավում գիտահետազոտական աշխատանքներում,
- ֆարմացիայի և դրան հարակից մասնագիտական ոլորտներում ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզեր, ուսանողական գիտական աշխատանքներ, ատենախոսական աշխատանքներ ղեկավարելու կարողություններ:

Հաղորդակցման

- հայերեն լեզվի գերազանց իմացություն, հստակ բանավոր և գրավոր խոսք, առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում (անգլերենի A2 կամ B1 մակարդակին համապատասխան),
- թիմում աշխատելու, որոշումներ կայացնելու կարողություններ, նախագծեր, ծրագրեր, մշակելու համար անհրաժեշտ գիտելիքներ, հաղորդակցման տարբեր իրավիճակներում համապատասխան որոշումներ կայացնելու ունակություն:

SZS կիրառություն

- Դեղագործության ոլորտին վերաբերող տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելու հմտություններ (ինտերնետ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ), դրանք գիտական աշխատանքում, դասընթացներում կիրառելու ունակություն,
- SZS-ների համակողմանի կիրառում՝ գիտական հետազոտություն կատարելու և նոր գիտելիքներ ստեղծելու համար:

Այլ կարողություններ

- Էթիկայի նորմերի կրող, մարդասիրություն դրսևորող, ինքնակատարելագործման ձգտող, ազգային մշակույթի, համամարդկային արժեքների պահպանող,
- անհրաժեշտ ռեսուրսները գնահատելու և ծրագրերը արդյունավետորեն իրականացնելու կարողություն,
- ժամանակային ռեսուրսների պլանավորման և կառավարման կարողություն:

2. Մասնագիտական կարողություններ

- Իրազեկվածություն ֆարմացիայի արդի հիմնախնդիրներին, ձեռքբերումներին, նորագույն մոտեցումներին, առողջապահության և կրթության ոլորտներում ներդրող ծրագրերին,

- համագործակցություն օտարերկրյա բուհերի «Ֆարմացիա» և հարակից մասնագիտական ստորաբաժանումների պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ (համատեղ գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր),
- ֆարմացիայի ոլորտում նոր գաղափարների, մտահղացումների զենեքացում՝ հետազոտական աշխատանքներ իրականացնելու և դրանց ներդնելու, ինչպես նաև նոր համագործակցություններ հաստատելու ուղղությամբ,
- մասնագիտական գործունեության ոլորտում օգտագործվող մեթոդների իմացություն, ժամանակակից սարքավորումների և գործիքների լիարժեք օգտագործելու, ձեռք բերած ինֆորմացիայի անալիզի, եզրահանգման և մեկնաբանության հմտություն,,
- լաբորատորիաներում աշխատելու անվտանգության կանոնների պահպանում ու ուսանողներին իրազեկում:

3. Ընդհանուր պահանջներ

Գիտական աստիճան

- Դեղագիտության կամ հարակից ոլորտներում գիտական աստիճանի առկայություն (գիտ. թեկնածու, դոկտոր և այլն) կամ դասավանդման փորձի բացակայության դեպքում՝ դեղարտադրության, դեղագործական գործունեության կազմակերպման ոլորտում առնվազն 3 տարվա պրակտիկ աշխատանքային փորձ:

Մանկավարժական փորձ

- առնվազն 2 տարվա մանկավարժական փորձ (ասպիրանտական տարիներին հատկացված դասաժամեր կամ լաբորատոր աշխատանքների դասավանդման) կամ առնվազն 3 տարվա պասիվ պրակտիկ գործունեություն,
- վերջին 5 տարվա ընթացքում մասնակցություն տեղական կամ միջազգային վերապատրաստումների և/կամ մասնագիտական որակավորման բարձրացման դասընթացների:

Պրակտիկ աշխատանքի փորձ

- դեղարտադրության, դեղագործական գործունեության կազմակերպման ոլորտում, գիտահետազոտական ինստիտուտներում և գիտաուսումնական հաստատություններում առնվազն 3 տարվա պրակտիկ աշխատանքային փորձ:

«ՖԱՐՄԱՑԻԱ» ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՔԱՐՏԵԶԸ

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն		Բ. Գործնական մասնագիտական կարողություններ	
Ա1	Մահմանել ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքները և հայեցակարգերը, բնապահպանական գլոբալ և լոկալ հիմնախնդիրները, ձևակերպել մաթեմատիկայի ընդհանուր դրույթները:	Բ1	Իրականացնել տարբեր բնույթի քիմիական միացությունների սինթեզներ և կառուցվածքային հետազոտություններ, կանխատեսել քիմիական փոխարկումների մեխանիզմները, նրանց թունաբանական ազդեցությունները և կանխարգելման ուղիները:
Ա2	Ներկայացնել քիմիական (անօրգանական և օրգանական) միացությունների կառուցվածքը, հատկությունները, անալիզի մեթոդները, դրանց թունաբանական ազդեցության, ինչպես նաև այդ նյութերի հետ աշխատելու անվտանգության կանոնները:	Բ2	Ուսումնասիրել ժամանակակից կենսաբանության, բուսաբանության, կենսատեխնոլոգիայի և կենսաբժշկագիտության հիմունքները և նվաճումները, ինչպես նաև կիրառական ոլորտները: Ներկայացնել օրգանիզմի և օրգան-համակարգերի կառուցվածքային առանձնահատկությունները և դրանց կարգավորման մեխանիզմները: Տարբերակել մանրէների հիմնական խմբերը և յուսաբանել դրանց դերը բնության մեջ ու մարդու կյանքում:
Ա3	Ներկայացնել ֆիզիոլոգիայի և անատոմիայի հիմնական հիմունքները, նկարագրել օրգանիզմի նյութափոխանակության հիմնական ուղիները, ինչպես նաև ախտաբանական պրոցեսների և ժառանգական հիվանդությունների առաջացման պատճառները ու հետազոտման նորագույն մեթոդները:	Բ3	Աշխատել դեղագործության ոլորտում տեղեկատվական աղբյուրների և անընդհատ նորացվող դեղերի հետ, ուսումնասիրել դրանց ֆարմակոկինետիկական և ֆարմակոդինետիկական առանձնահատկությունները:
Ա4	Նկարագրել դեղերի դեղաբանական հատկությունները, կիրառման անհամատեղելիությունը և կենսամատչելիությունը, ներկայացնել ֆարմակոկինետիկայի, ֆարմակոդինամիկայի, ֆարմակոդինետիկայի, կենսատեխնոլոգիայի և այլ հիմնահարցերը:	Բ4	Կազմակերպել և իրականացնել դեղաբուսական հումքի հավաք, դեղերի դեղատնային և գործարանային արտադրություն, գնահատել դրանց որակը արտադրության տարբեր փուլերում, շրջակա միջավայրի պահպանման և արտադրության սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման միջոցները:
Ա5	Ձևակերպել դեղաբուսական հումքի հավաքի, մթերման, մշակման, նորմավորման և օգտագործման տեսական ու փորձարարական հիմունքները, լուսաբանել դեղերի դեղատնային և գործարանային արտադրության տեսական հիմունքները և տեխնոլոգիական կանոններն ու սանիտարահիգիենիկ նորմերը, գնահատելու դրանց որակը արտադրության տարբեր փուլերում նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:	Բ5	Իրականացնել դեղատնային գործունեության կազմակերպման աշխատանքներ, վերլուծել դեղատան գործունեության տնտեսագիտական ցուցանիշերը, մշակել ֆինանսական պլանն ու արտադրական ծրագիրը և միջոցներ ձեռնարկելու տնտեսագիտական արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Ա6	Ներկայացնել դեղերի սինթեզի դեղագրքային անալիզի մեթոդները, որակի գնահատման և հսկման նորմերն ու պահանջները:	Բ6	Լուսաբանել դեղերի հիմնական դասերի ստացման եղանակները, ֆարմանալիզի ժամանակակից պահանջներն ու մոտեցումները, դեղերի կառուցվածքային առանձնահատկությունները, կանխատեսել դրանց կենսաբանական ակտիվությունը և դերը դեղաբանության մեջ, իրականացնել ակտիվ բաղադրիչների քանակական և որակական որոշում:
Ա7	Մահմանել դեղերի շրջանառության տարբեր օղակներում դեղագործական գործունեություն ծավալելու և կազմակերպելու սկզբունքներն ու կառավարման հիմունքները, կազմակերպել դեղատան դեղատնային բազայի, դեղերի որակի հսկման լաբորատորիայի բոլոր աշխատանքը, կիրառելով նոր տնտեսագիտական, սոցիալ-հոգեբանական և կառավարման կազմակերպչական մեթոդներ:		
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ			
Գ1	Աշխատել թիմում, պատրաստել զեկուցումներ և հաշվետվություններ, ընդհանրացնել հետազոտությունների արդյունքները, ինչպես նաև ակտիվորեն մասնակցել գիտաժողովներին, սեմինարներին և քննարկումներին:	Գ4	Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը դեղագործության ոլորտի տարբեր գործառնությունների իրականացման ժամանակ, լինի նախաձեռնող և պատասխանատու որոշումներ ընդունելիս և կատարելիս, դրսևորի մարդասիրություն, ձգտի ինքնակատարելագործման, վարի առողջ կենսակերպ և այն քարոզի:
Գ2	Օգտվել դեղագործությանը վերաբերվող տեղեկատվական տարբեր աղբյուրներից (համացանց, էլեկտրոնային գրադարաններ, գովազդային նյութեր, տեղեկագրեր, գիտական հոդվածներ, հաշվետվություններ), վերլուծել նոր տեղեկատվությունները, հասկանալ ժամանակակից բժշկագիտական գրականության տվյալները և կիրառել այն գործնականում:	Գ5	Մատչելի ձևով ներկայացնի սպառողներին դեղերի հիմնական բնութագրերի և որոշակի խմբին պատկանելիության մասին, համաձայն դեղերի միջազգային համակարգերի պահանջների:
Գ3	Մայրենի և որևէ օտար լեզվով մասնագիտական բնույթի տեղեկատվություն քաղել տարբեր աղբյուրներից, ինչպես նաև իրականացնել մասնագիտական բնույթի հաղորդակցում:		

Ուսումնական մոդուլի անվանումը	Մոդուլի թվանիշը	Ծրագրի կրթական վերջնարդյունքները																					
		U1	U2	U3	U4	U5	U6	U7		F1	F2	F3	F4	F5	F6				Q1	Q2	Q3	Q4	Q5
Հայոց լեզու և խոսքի մշակույթ	1401/Բ01	X																	X		X		
Հայոց պատմության հիմնահարցեր	1106/Բ03																		X		X		
Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/-1	1602/Բ01 1604/Բ 1608/Բ31																					X	
Անգլերեն/Գերմաներեն/Ֆրանսերեն/-2	1602/Բ01 1604/Բ 1608/Բ31																					X	
Ռուսերեն-1	1704/Բ02																					X	
Ռուսերեն-2	1704/Բ02																					X	
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	2301/Բ01												X						X	X			
Քաղ. պաշտպան. և արտակարգ իրավիճ. բնակչ. առաջին բուժօգն.	0002/Բ01																		X				
Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	0708/Բ01	X										X							X				
Կիրառական վիճակագրություն և տվյալների հետ աշխատանք	0105/Բ01																		X	X			
Փիլիսոփայության հիմունքներ	1302/Բ18																		X		X		
Իրավունքի հիմունքներ	1901/Բ01																		X				
Ֆիզդաստիարակություն	0001/Բ																						
Տնտեսագիտության հիմունքներ	1007/Բ20																		X				
Գործարարության հիմունքներ	1005/Բ24																		X				
Քաղաքագիտության հիմունքներ	1202/Բ23																		X				

Մշակութաբանության հիմունքներ	1107/Բ55																			X	X		
Կրոնագիտության հիմունքներ	2101/Բ01																			X			
Բարոյագիտության հիմունքներ	1302/Բ01																			X			
Սոցիոլոգիայի հիմունքներ	2203/Բ22																			X			
Տրամաբանության հիմունքներ	1301/Բ02																			X	X		
Հոգեբանության հիմունքներ	1306/Բ17																			X	X		
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	0604/Բ40	X																		X			
Ընդհանուր և անօրգանաան քիմիա	0608/Բ15		X							X													
Կենսաբանություն	0611/Բ01			X							X												
Լատիներեն-1	1406/Բ01																				X	X	
Մաթեմատիկա	0102/Բ01	X																					
Լատիներեն-2	1406/Բ02																				X	X	
Բուսաբանություն	0611/Բ02					X					X										X		
Մարդու անատոմիա	0706/Բ01			X							X										X		
Օրգանական քիմիա-1	0603/Բ19		X								X										X	X	
Անալիտիկ քիմիա-1	0608/Բ04		X								X										X	X	
Նորմալ ֆիզիոլոգիա	0706/Բ02			X								X										X	
Ֆիզիկա	0410/Բ01	X																					
Ֆիզիկական և կոլոիդ քիմիա	0604/Բ01	X	X								X										X		
Թունաբանական քիմիա-1	0610/Բ01		X	X							X										X	X	
Անալիտիկ քիմիա-2	0610/Բ02		X								X										X	X	

Կենսօրգանական քիմիա	0610/Բ03	X							X									X				
Մանրէաբանություն-1	0709/Բ01									X								X				
Ֆարմքիմիա-1	0610/Բ04				X								X					X				
Թունաբանական քիմիա-2	0610/Բ05	X	X						X									X	X			
Օրգանական քիմիա-2(ԲՄՔ)	0610/Բ06	X							X									X				
Կենսաքիմիա-1	0709/Բ01		X							X								X				
Դեղաբանություն-1	0611/Բ03			X							X											X
Մանրէաբանություն-2(իմունոլոգիա, վիրուսոլոգիա)	0611/Բ04									X								X				
Կենսատեխնոլոգիա	0610/Բ07			X									X					X				
Ֆարմքիմիա-2	0610/Բ08				X								X					X				
Ֆարմտեխնոլոգիա-1(գործարանային)	0609/Բ01				X							X										X
Կենսաքիմիա-2	0611/Բ06		X							X								X				
Դեղաբանություն-2	0611/Բ05			X							X											X
Ֆարմքիմիա-3	0610/Բ09				X								X					X				
Ֆարմտեխնոլոգիա-2(դեղատնային)	0609/Բ02				X							X										X
Բիոէթիկա	0611/Բ09																					X
Ախտաբանական ֆիզիոլոգիա	0611/Բ07		X								X							X				
Ընդհանուր հիգիենա	0611/Բ08				X							X										X
Դեղարտադրության ստանդարտավորում և GMP համակարգ	0610/Բ10			X	X							X										X
